Aġôt'k' Yovhannow Vanandec'woy Benik koč'ec'eal vardapeti

Yovhannês <Sarkavag>

urn:nbn:de:hbz:5:1-9539

Gaussen 3088 (21)

Գրատ. 3088

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԻԱ

ԱՂՕԹՔ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆԱՆԴԵՑԻՈՅ

ՔԵՆԻԿ

ԿՈՉԵՑԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌԺ.—1861

3088



ԱՂՕԹՔ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆԱՆԴԵՑԻՈՅ

ԲԵՆԻԿ

ԿՈՉԵՑԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ի խորոյ սրտէն խօսք ընդ Աստուծոյ։

Ա

Տէր Աստուած ահաւոր և սքանչելի, սահման սիրոյ և ողորմութեան, Քրիստոս Թագաւոր բարձրեալ հօր որդի, ստեղծիչ ամենայնի, և անգոյութեան գոյացուցիչ, գթած և բարերար, օրհնեալ յէական հիւթից, բարեբանեալ յիմանալեաց երգով, առաստ 'ի հանուրս, հարուստ 'ի բնաւս, ահարկու վերնոց, սոսկալի տարերց, սարսափումն սանդարամետականաց, հզօր զօրագունից, սեսուչ աննկատելեաց, ողորմու-

թիւն անկշիռ, հաստիչ յաւիտենից, ձեռնկալու տեսչութեանց և անտես-չութեանց, ապրեցուցիչ, դարմանիչ և կեցուցիչ, որք բաղկացեալ դոն 'ի բնաբար բարեոյդ, երկայնամիտ և բարեխնամ, և ապաւէն առ քեզ ձայնեցելոցն։ Բժիշկ երկնաւոր անձառ գովեստից, որոյ հրամանդ է դեղ կենաց. լոյս և կեանք որ կարդան առ քեզ, յարութիւն, նորոգութիւն և քաւութիւն մեռելոց անձանց, երանութիւն, թագաւորութիւն և արքայութիւն հրաւիրելոց 'ի քէն, շարժող գթութեան հօր և հոգւոյն, սրբութիւն, արդարութիւն, և յանհպական երանութիւնդ միութիւն մաքրեցելոցն 'ի քէն։ Զոր և ես յաւիտենից կորուսեալս գիմեալ 'ի վարմն քո անզննելի գթութեանդ ապաչեմ, և զանչափ չարիսն իմ 'ի լուր երկնի և երկրի հրապարակեմ, առաջի սուրբ խաչին դրոշմելոյն, կնքեալ անհասխորհրդեանդ Աստուծոյ. և ըստ աւազակին կարկառեմ առ քեզ զաչս իմ, և խմանալի բարբառով բախեմ

զդու

անյիշաչար քո տէրութեդ, որ մահապարտացն քոց և մեռելոցն յարիւն անհասիդ՝ հայցէիր զթողութիւն։

Յիշեա զիս ողորմութիւնդ անբաւ, և զոր արքուցեր աւազակին, արքո ծարաւելոյս, վասն զի կենդանի ես այժմ տեսանեմ զքեզ մուօքս 'ի վերայ կենդանարարաց փայտին, և զկայլակս արեան անդէն իսկ առաջի իմ արտաքս հոսեալ, և 'ի շրթունս քո այժմ հպեալ կայ ճաշակ լեղւոյն և քացախին։ և ձայնդ օրհնութեան առ Հայր զելի ելին աղաղակէ։ և որպէս միշտ կենդանի 'ի ծոցն անիմանալի ըստ էութեանդ, և էիր 'ի գիրկս մօր մարմնաւորութեամբ; նոյնպէս անմահ մեռեալ կենդանի մարմնիդ դեռ ևս 'ի վերայ կենաց փայտիդ՝ ծուլածաւալ մեղսաթաթախ աչացս իմ տեսանի։

Արդ զնոյն իսկ զօրն զայն ահեղ, որ զճաշակ մահու արբեր, և զանճառ խորհուրդ երեքսրբեան տէրութեանդ որ 'ի ժամուն յայնմիկ զօրացեալ եղև, և զկամաւորն քո ըզ-

մարախրոսական կիրս առ բնաբար
բարիդ բարեխօս ունիմ, անխմանալի
անհաս էութեանդ Հօր և Հոգւոյդ։ Ար-
ձակեա առ իս զիմանալի բարբառն
երանաւէտ որպէս առ գառապար-
տեալ աւազակն, և բաց ինձ զկնքեալ
դուռն դրախտին՝ յորմէ արտաքսեալ
մանեալ եղէ, և զանբաւ բիւրս բիւ-
րուց զաշխարհակշիռ ախան խզեա
բևեռօքդ զոր ես ինձէն հրաբորբոք
ձեռօք իմ պատրաստեցի։ վասն որոյ
չունիմ իմաստութիւն հոգւոյ, խօսք
լեզուի և բարբառ բերանոյ զանբաւ
չարիս իմ պատմել, և զանսահման
անօրէնութիւնս իմ առաջի ամենա-
տեսողիդ արտայայտել։ Մեղայ պար-
տապանս անբաւ գանձուց, անկեն-
դան մահու, ձաղելիս մեղայ, 'ի բար-
ձանց երկնից ընկեցայ, փուշս առա-
ւել քան զկշիռս լերանց վարուց դի-
ղեցի։ կենօքս իմ, կենացն յաւիտե-
նից կորուստ ածի։ բաղին և խոհեր
կորուսչին գտայ։ անյարդար բա-
ժակս մահու, անմաքրութեան գը-
տիչ, մնոտի պարծանօք պաճուճ-
ձեալս, յամենայն իրս վնասապարտ

եղեալս՝ կուտեցի բազմադիմի յան-
ցանս, հիացմունս՝ հոգս հալոցա-
կանս աշխանս մեղաց, անհնարա-
ւորն թուականութիւնս մուտց ան-
բարդելիս։

Եւ արդ տէր Աստուած, յիշեա
զքո անսահման սէր յաւիտենից, և
արկ առաջի անեզրական գթութեդ
զներդործութիւն բարերարիդ եղեալ
'ի դարս դարս, հիազօրս և հրաշա-
պատումս։ Ենկատեա յանբաւ բարձ-
րութենէդ զխորս խաւարի, և զհա-
մահաւաքիչս ամենայն ապականա-
ցու կրից։ Ընկալ զաղաչանս չա-
րալլուկ չանորդոյս, ըստ քում անսի-
շաչար բարերարութեանդ։ և խո-
նարհեա 'ի խնդրուածս խորատու-
զելոյս 'ի վերն կորստեան։ Բաց զան-
սպառ գանձարան կենացդ յաւիտե-
նից։ շնորհեա դեղ թողութեան փը-
տեալ և ապականեալ ոգւոյ մահա-
հարուած գանելոյս։ որ շուայլեալ
արբեցութեամբ չարին հնգեկին ըզ-
գայութեամբն, իբր զքուր հեղայ յա-
մենայն մասունս մեղաց։ ոչ կատու-
ցի զաչս բնաւ 'ի բարձունս երկնից,

և ոչ զհիւազօր հանդէս հրեղինացդ
նկատեցի, այլ միշտ և յաւէտ զհե-
ղեղս հոսանաց ահագնալուր անօրէ-
նութեանց իբր զսահանս տիեզերա-
կործան ջրհեղեղին ժայթքեցի 'ի
մեղսասէր մտացս առաջի աներևու-
թիւց տեսողիդ. և զհամօրէն տարե-
բացս տաղտկացուցի զտեսակս և
զերկնային զինուորութեանցդ դառ-
նացուցի զհանդէս. զի համբարս
խանթից խաւարասէր իշխանին յիս-
կըզբանց և այսր հասեալ՝ յիս կոր-
զեցի: Եւ թեթև և նուազ գտաւ
յաչս իմ այնքան ծանուն անդունդք
հեղեղաց ջարին:

Եւ արդ որպէս կացից յանդիման
ահաւորիդ Աստուծոյ, և որով ամ-
թով ակնարկեցից 'ի բարձունս. որ
լեզուաւ կարդացից զանուն անեղիդ,
և կամ զոր ձեռն կարկառեցից առ
հզօրդ. զի խորտակեալ բեկեալ ման-
րեալ գիշատեալ գազանաբեկ եղեալ
եմ յամենայն մասունս մահու հրն-
գեկին զգայութիւն, ամենայն ասա-
տիւ հարուածեալ, և անմահ մահով
գրաւեալ 'ի գուբն ապականութեան,

յանբաւ բիւրս բիւրուց անդունդս
անկեալ. և զբաժակ ցասման բնա-
ւեցն արբեալ. զՀաշակ դառնութեանն
մրրկածին բոցոյն այնքան խորա-
ցեալ վեհեցն յիս գրաւեալ. քանզի
բարձրացեալ մեղք գտայ քան զեր-
կինս, և խոնարհեալ անօրէնութիւնք
քան զանդունդս. լայնացեալ բազ-
մագիմի չարեաք քան զոլորտս ծա-
գաց երկրի, և տարածեալ անդր քան
զշրջանս եթերական օդոց. քանզի
զբոլոր յանցս էիցս ծրարեցի՝ի միտս
իմ իբրև զմէտ մի փոշւոյ՝ի սիրտ
երկրի, և զանբաւութիւն դժոխոց՝ի
գիրկս առի, իբրև զհամատարածն
զկաթիլ մի անկեալ՝ի նմա. նաև զա-
հաւորութիւն հրոյն իբր խերևէշ մի
կնքեցի՝ի սիրտս։ Եւ զանբաւութիւն
անեզրական արտաքին խաւարին
ամփոփեցի յերիկամունս իմ իբր
հատ մանանխոյ՝ի տարաշխարհս,
զանսահման դաժանութիւն ատակի
տարտարոսին գրոշմեցի յոգի իմ
նուազ քան զսակաւ տերևս՝ի տե-
սակս իւրեանց. և զծանրութիւն հը-
րոյ և հողոյ իբր նշանախեց մի դրոյ

առ իս կամուցի : Զմեծութիւն ծո-
վուն և զանգնին ախս բոլոր արա-
րածոց թաքուցի 'ի վերոյին միտս
իմ՝ իբր խերևէշ մի գանկի, և զան-
գուածս անդնդոց և զտեսակ գոյու-
թեան քառիցս տարերաց ոչ ինչ հա-
մարեցայ : Զի թէ ըստ բոլորման
անծայրութեան երկնից վերհագունի
հնար էր լեալ ընթանալ մտաց իմոց
'ի գիւտ չարեաց, թեթև էր համա-
րեալ յաչս իմ՝ այնքան ալիք յանցա-
նաց զվայրենական կատաղութեան
իմոյ մտացս : Քանզի միշտ ընթա-
ցեալ եղէ 'ի կորստեան իմոյ գիւտ,
և անպատկառ և անխորշ կացի յե-
ռեսացդ Աստուծոյ. զի ոչ ոք բար-
կացոյց զքեզ 'ի բնաւիցս իբրև զոր-
գիս կորստեան, որ ըստ ամենայն
մասանց մտածութեանց մեղաց գան-
ձեցի յիս զմտածութեանց ոլոր-
մունս. զի ոչ է կարելի մարմնեղինի
իմանալ զչափ մեծութեանց շրջանաց
բոլոր երկնային պարունակացն և
շրջել ընդ հետս անդնդոց, կշռել
զախս յաւիտենից և 'ի համարի ու-
նել զծփումն ալեաց ծովուն երկնա-

տարած, նա և զահագին խորոցն յա-
ւիտենից՝ որ հողմընթաց երագու-
թեամբ 'ի գոգս իւր կափուցեալ ու-
նի զամենայն արարածս, քան զան-
սահման իմոյ յանցանացս. զի ան-
ճառ մտածմունք և գործք չարեաց՝
իբր մրրկատարափ նեռս 'ի խորոց
սրտէս միշտ 'ի բարձունս առաջի
բնաւից տեսողիդ տարածեցաւ, և
ապականեցաւ տեսակ քառից տա-
ւերացս 'ի նկատմանէ աչից, 'ի տուր-
ևառուութենէ հրաթոյն [1] շնչոյս, 'ի
շշաւփելոյ մատանցս և 'ի գնացից ե-
ղեռնաթիւր գարշապարիս: Զի ե-
թէ ոչ էր բարերարութիւնդ քո կա-
լեալ 'ի կայի, զերակս լուծեալ էր
արդեօք ախք յաւիտենից. մթացեալ
էութիւն լուսոյ հոսեալ յընդհա-
նուրս ծոմն երկնային [2] և խաւարեալ
լուսաւորքն բարձանց, և կամ համ-
բարք յաւիտենական հրոյն գերակայ
քան զսիրեզերասոյզ ջրահեղեղին
յորձանս 'ի վերայ երկրի մածանէր
'ի բարձունս:

Եւ զինչ ասացից զայնքան չա-
ռեաց պատճառ արարածոց յանձն

իմ լեալ, և զոր կորստեան վիհ նը-
կատեցից 'ի միտս իմ, զոր անձամբ
անձինս ամբարեցի. զոր՞ չափ անօրէ-
նութիւնս զանազանս և բազմադէմս
'ի մարմինս իմ գրաւեցի, որ շղթայ-
ւք հրեղինօք պարաւանդեալ կա-
լոց եմ ըստ խրատանց առաջի սոս-
կալի բեմբի քո, և իւրաքանչիւր կեր-
պիցն դառն դահիճք դատախազ լի-
նելոց են առաջի աշխարհական ա-
տենին, և այնչափ անդունդք բա-
ցեալ զբերանս իւրեանց՝ սպասեն
կլանել զիս։ Զի թէ ոչ դարձցի
արդար դատաստան քո յողորմութի
դթութեան, չէք 'ի սահմանաց
քոց յերևելեաց և յաներևութից որ
ոչ հառաջեն առ քեզ հատանել 'ի
վերայ իմ զանմահ մահն, և յայտ-
նին վասն իմ անիմանալի ծածկեալ
անըմբերելի տանջանացն տեսիլք,
սոսկալի և քստմնելի բարկութեան
տարափք, յորմէ զարհուրեալ սա-
սանի դեհենին բռնութիւնք, և սոսկա-
ցեալ դողացէ տարտարոսին դառ-
նութիւնն, որոյ յեղանակն ոչ փակի
ընդ գրով, և ոչ ընդ միտս երևու-

թացեալ տեսանի. որ և խաւարն արտաքին առ այն իբրև զլոյս մեծ համարեալ է, և հուրն անշէջ իբրև զպաղումն ձմերայնւոյ. և բռնութիւն տարտարոսին իբրև զհուր տոչորեալ, և թիւնք հրեղէն ուրդանցն իբրև զմեղու խորիսխ, և ամօթն յաւիտենից իբրև զփառս, և մերկութիւնն իբրև զլոյս զգեցեալ: Զի քեզ միայն է իմանալի ահագին տագնապ աղետին և որպիսութիւն չարին, զոր աւարեալ էր վասն ապստամբաց քոց. և ինձ միայնոյ հանդիպեցաւ ըմբռնիլ 'ի նմանէ, զի օրն այն ահեղ՝ վասն իմ սահմանեցաւ, և ես եղէ ասպարէզ հանդիսարանին, և վախճան կատարածի ամենայն մեղաւորաց: Եւ այսպիսի անօրէնութեամբ զանկեալս զիա՞րդ ապրեցայց յահագին ատենին յերեսաց քոց, որ զանգործս տեսանես, և զոչ եղեալսն բերես 'ի կշիռս իրաւանց քոց, և զչունչ ամենայն մտեղեաց 'ի յօդս ցնդեալ և 'ի հող լուծեալ, 'ի ջուր մածեալ և 'ի հուր հեղեալ, 'ի քաւից տարերացդ այդոցիկ ածես կա-

ցուցանեա առաջի քո 'ի տիեզերա-
ժողով հրապարակին 'ի հանդէս դա-
տաստանի, և խնդրեա զիրաւունս
յամենայն եկաց յեկակաց. զի զա-
մենայն ինչ զոր արարեր, 'ի նորո-
գութիւն փոխարկելոց ես, և 'ի գոր-
ծոց քոց ոչ կորնչի ինչ, և ոչ վրիպի
'ի մտածութեանց և 'ի խորհրդոց և
'ի նկատմանէ աչաց և մտաց, որ ոչ
անկանի 'ի ներքոյ գաւազանի ար-
դարադատ իրաւանց քոց: Ապա որ-
պիսի անդունդք անճողոպրելի ահա-
ւորութեան քո ըմբռնելոց է զիս 'ի
ժամուն յայնմիկ, և կամ որքան գե-
հեն և բովք հրոյ բորբոքեալ ունի
զանձամբ իմով. որքան անդունդք
անգնդոց բացեալ զբերանս, և որ-
չափ հոսումն հեղեղաց հրեղէն գե-
ոցն 'ի մի վայր ծաւալեալ ողողեալ
'ի խորան յաւիտենից՝ հերքել ունին
զիս յերեսաց ահաւորիդ Աստուծոյ.
որքան գաւազանք հրեղէնք բոլոր
երկնային զօրութեանցդ ինչանեն ու-
նել 'ի վերայ գլխոյ գահավիժելոյս,
և յորպիսի ամօթ ըմբռնելոց եմ
բազմակերպարան մերկութեամբ,

որ բաւական է հալել զերկինս և զերկիր, թող թէ միայն զանձն վսեռամիտ հիքոյս։ Յորժամ տարրեալքն արարածքս բոլորովին ամբաստանք ինձ լինիցին և անմարմնոցն համարէն հնչին ձայնք ընդ նոսին. վասն զի լի լսմամբ երկնոք և երկրաւ, մուրհակք չարեաց իմոց շեղջակուտեալ կան առաջի ամենից տեսողիդ։ Եւ առաւել քան զերկնային ամպան ծառանայ 'ի նոցանէ մրրիկք բոցոյ՝ ըստ իւրաքանչիւր չարեացն կերպի զոր գործեցի։ Եւ ժահահոտութիւն շարաւոյ ըստ անբաւից տեսակաց տաղտկացուցանէ զաշխարհաժողով հրապարակն, չարժէ զանբարկանալի բնութիւնդ 'ի բարկութիւն եղկելոյս։ Այլ գիտեմ զանսահման սէր նախախնամութեան քո և զանչափաւ ողորմութեան. բացարձակեա զանբաւ գթութս ողորմութեանդ 'ի վերայ մեղաւորաց, և երկրաւորաց անդր քան զկարիս հոգւոց երկնաւորաց և հոգեղինաց. զի որպէս երկինք երկնից և ամենայն արարածք լրիւ իւրով մածեալ՝ քան զհիւթ փո-

շոյ միոյ, այնպէս առաւելեալ է գը-
թութիւն սիրոյ քո քան զամենայն
մարմնականաց, և հոգեղէնաց միա-
ցեալ'ի նկատումն բարեաց. զի ոչ
փակէս ընդ սահմանաւ, և ոչ կշռի,
և ոչ բերի ըստ միտս, և ոչ ընդ ծը-
րաւ անկանի, զի ամենայնի զօրես.
և յակնարկութենէդ միայն հալին
երկինք և երկիր, ցամաքի ծով, և
ամենայն բնութիւնք հրդեհեալ լու-
ծանին. և ոչ կարէ կալ առաջի ա-
հաւորութեան փառաց քոց բնաւին
բարձրութիւնք և համօրէն խորու-
թիւնք. զի'ի քէն սարսեալ սաքրին
խաւարային իշխանութիւնք, և ա-
մենայն զօրք հրեղինաց ոչ կարեն
ակնարկել յէութիւն անմատոյց լու-
սոյ քո: Եւ եթէ հայիս յայդքան բա-
րերար զօրութիւնդ և յիշես զուխտ
ողորմութեան քո, կարող ես զիս
կորզել յահագին կորստենէն և կըն-
քել զօր վախճանի իմոյ 'ի գանձա-
րան կենացդ յաւիտենից:

Ամենազօր, անճառ և անքննին
Աստուածդ ահաւոր և ամենայն ան-
հնարից հնար, հնարաւորեա հիքոյս

և եղկելոյս վերականգնել 'ի խորա-
սոյզ գլորմանէս և գալ 'ի վեր, և արկ
զառաստանակ ոլորմութեանն և զկարթ
կենաց 'ի սիրտ անեզրական խորու-
թեան անսահման վհիս յոր մահար-
ձանեալ կամ. և զանկեալս 'ի ժանիս
հնացեալ օձին՝ կորզեա կարող զո-
րութեամբ որպէս զԱստուած բա-
րերար, և հրդեհեա անկրական [4]
հրով ահաւորիդ զերկաթակարծր
զաշխարհադէզ [5] զանթիւ քօղ խաւա-
րին մեղաց իմոց, զոր արձանացուցի
ընդդէմ երեսաց ծայրագոյն լուսոյդ.
հերքեա, հալածեա, անձառ ծա-
գումն էութեանդ Հօր. ցրուեա փա-
րատեա Հոգիդ խակակից. խզեա, հեր-
դեհեա անքննելիդ յէութեան ան-
հասդ Աստուած, և նկատեա յան-
սահման բարձրութենէդ զապակա-
նեալս չարեօք իմովք և անդնդակուլ
կենցաղոյս:

Հրաշագործեա հիազօր զօրու-
թեամբ երեքսրբենիցդ առ իս զձիր
պարգեւացդ, որպէս ներգործեցեր
անառակ որդւոյն և անկելոյն 'ի
ձեռս աւազակաց. զի ակնարկումն

քո բաւական է կորզել զկորուսեալս
'ի լուսոյդ մշանջենաւոր։ որ ըստ ան-
չափ գթութեանդ համարիս զհա-
զար ամն անօրէնութեան դարձո-
ղացն առ քեզ իբրև զմի օր, և զար-
դարութիւն միոյ աւուր գրես իբրև
զհազար ամ։ որ չափես զանբաւու-
թիւն ծովուց անսահման յանցանաց
իբր ափով մի, և որ ըստ մեծութեան
երկնից՝ իբր թզաւ, և որ ըստ լրման
աշխարհիս՝ քլաւ, որ կշռես ըստ լե-
ռանց բարձրութեան զանօրէնու-
թիւնս 'ի քեզ դիմելոց իբրև 'ի կը
շիռս դանկաց։ և որ զտարաձգութիւն
դաշտաց անբաւութեանց բերես առ
կշռորդս։ որ իբր կաթիլ մի 'ի դուլէ
և մէտ մի փոշւոյ համարիս առ ան-
բաւութեան քո զտարրական գոյու-
թիս։ և զամենայն բնաւս իբրև զոչինչ,
և զոչ եղեալսն ունիս 'ի վերայ ոչնչի
ահաւոր զօրութեաբ քով։ զի անհաս են
խորհուրդք քո, և ամենազօր ձեռն
անեղիդ, և անհետևումն ողորմութիւն
քո՝ անհպելի մնայ 'ի միտս եղելոց։
Վասն որոյ անյուսալի անձն իմ յու-
սալի եղեալ միջնորդ և բարեխօս ու-

նիմ առ համագոյութիւնդ զէական
զօրութիւն Երրորդութեդ, զմայրդ
Լուսոյ Մարիամ, և զքենարան ան-
մահ Բանիդ, զբոլոր սէր սիրոցայ
քոց վերնոց և ներքնոց, և զպարգա-
տանս աղօթից արարածոց քոց՝ 'ի
սկզբանէ մինչև յօրն աներեկ առ
քեզ հասեալ, և զխորհրդականու-
թիւն մահու միանականիդ Հօր։
Թող զանցանս իմ բաղում, քաւեա
զանօրէնութիւնս իմ անբաւ, սըր-
բեա 'ի խղճէ չարեաց զդրուն զգայ-
ութեան իմոյ։ Ցուր ինձ դարձ ա-
պաշխարութեան և զեղջ արտա-
սուաց, և հեռացո 'ի սրտէ իմմէ ըզ-
չարին պատրանս. բևեռեա յերկիւղ
քո և 'ի սէր զմիտս և զհոգիս. ար-
ձանացո առաջի աչաց իմոց զերա-
նութեան վիճակ աշխարհին կենաց
և զահ ահեղ գժոխոցն. նորոգեա զա-
պականեալս շնորհիւ քո, բաց զիմա-
նալի աչս 'ի տեսութեն հրաշից քոց.
վասն զի պարարեալ է 'ի պատրանս
անոտի աշխարհիս և երկնատարած
սատարէզ եղեալ 'ի հանդիսարանի
բանսարկուին, և համահաւաքիչ ա-

մենայն չարեաց զօրէն ամենածայր
ծովուն որ 'ի գոգս իւր կրէ զբազ-
մութիւն ձկանց։ Բժշկեա զբեկեալ
մանրեալ զգօսացեալ ձեռն իմ. վասն
զի 'ի բովս բորբոքման տոչորման
մրրոյ գեհենին եղեալ է զամենայն
ժամանակս, և լցեալ ամբարեալ յո-
րովայն նորա զաշխարհագէզ փուշս
չարեաց տատասկաց։ Դադարեցո
զթիւր ընթացս իմ 'ի Ճանապարհէ
չարեաց որ միշտընթաց 'ի վերայ
կայծականց անշէջ հրոյն շրջեցաւ,
և զլսելիքս իմ յուսկնդրութենէ
մահագուշակ պատրոզին, զլեզուս
'ի լուտական բարբանջմանց. վասն
զի սուրբ հրեղէնք և շանթք և
շփոթք փայլատականց յարաժամ
թափեալք և թափին 'ի սմանէ։
Սրբեա զմիտս և զխորհուրդս և ըզ-
սալացեալ զսիրտս 'ի զազրութենէ
բազմահամար խանթից խոհերին.
ցամաքեցո զյորձանս անթիւ անեզ-
րացեալ տղմատարած ծովուց որ
'ի սմա շեղջակուտեալ մթագին վը-
հացն կան անծայրացեալ անդունդք։
Եւ հան 'ի խորութենէ սորա զալաքս

մրրկատարափս հրաթոյնս դաժա-
նութեամբ խոհերս և խաւարայինս.
վասն զի ամենայն կապարձք անբա-
րեսէր իշխանին 'ի սմա թափեցաւ. և
հալածեա զգազանս անթիւս և բազ-
մակերպս բուսնեալ 'ի յորջս կեղտ-
անուն վաստուէր անձինս, որ հա-
նապազօր անխնայ դահիճք դաժանք
եղեալ՝ չարալուկ զոգիս իմ 'ի մե-
տապս անրմբերելիս տանջեն սատա-
կավէրս: Ելիջո զհրաբորբոք բերան
իմ ցօղով ողորմութեան քո, և բաց
'ի բանս քո բարիս որպէս բարերար
և մարդասէր. բժշկեա զապակա-
նեալ անդամս իմ բոլորովին, վասն
զի չկիք 'ի սմա առողջութիւն. այլ ա-
մենայն վշտօք հարուածաբեկ եղեալ
եմ 'ի կորստեան կարապետէն, զոր
քո միայն է կարողութիւն կենադոր-
ծել, որ բարձեր զմեզս աշխարհի. և
ամենայն ինչ կարելի է քո անսահ-
մանելի ատուածութեդ: Որ զվէմս
արձանացեալ լերանցն յաւիտենից
հերձեր, և ընդ ծործորս նոցա ար-
ձակեցեր զվտակս աղբերաց, բաց
զառագաստ ապառաժեալ սրտիս, և

'ի համագոյական աղբերէդ արքո
ղպապքու�ծարաւոյս։ Որ 'ի ծայ-
ռատաշ վիմէն արձակեցեր գետս ընդ
անջրդին, հան 'ի խոպանացեալ ըզ-
գոյարանաց գահավիժելոյս արտօսր
արժանի ապաշխարութեան. լեց զսո-
վաբեկ անձն իմ 'ի փչրանաց ողոր-
մութեան շնորհի քո, այդ որ բանաս
զձեռնդ հզօր և կերակրես զամենայն
մսեղիս, զի ոչ գոյ չափ և կշիռ զօ-
րութեան ահաւորիդ, զի կամք քո
գործ է կատարեալ։ Որ յանհուն
յաննիւթ վէպ խորութեան խաւա-
րին մածուցեր զբնութիւնս ջուրց,
և կապեցեր սանձեցեր զամէհի բը-
նութիւն աշխարհակուլ ծովուն ա-
ւազաւ, և սահմանեցեր զոլորտս նո-
րա բռնութիւն անդնդային հողմով,
և զզօրութիւն ալեաց նորա կար-
կեալ կապէ ակնարկուութիւն քո։ Եւ
արդ, տէր Աստուած, հզօր ահաւոր
և անքաւ, ակնարկեա յանկշիռ բարձ-
րութենէդ յանկեալս 'ի վիհն կո-
ծոստեան խաւարային անդունդս ան-
դընդոց, և մի սահմաներ 'ի վերայ իմ
զանսահման աստուածութեանդ ա-

մենակարութիւնդ, և մի ծանր դրեր
զյաւիտենից կորուսեալս առ կոչումն
կենացդ յաւիտենից։ Մի կացուցա-
ներ զհիւթ փոշւոյ միոյ 'ի դատաս-
տան և յիրաւունս առաջի այդր ան-
բաւութեանդ, որ ամենայն տարր և
անտարր նուազեալ է առաջի քո
քան կաթիլ մի յանբաւութենէ ծո-
վու։ Եւ մի հատաներ 'ի վերայ իմ
զվնիս անմահ մահուն վասն սուրբ
և սոսկալի ատտուածութեանդ. նո-
րոգեա զապականեալս շնորհիւ քո,
և 'ի բաց ընկեա 'ի գիտութենէ քումմէ
զզազրալի տիղմն իմ դաժան յան-
ցանացս, և զանակնկալս բարեաց՝
արժանաւորեա հասանել ողորմու-
թեան քում։ Ի վերայ ամենայն հրա-
շագործ արարչութեանդ արա զար-
մանս և հիացումն երկնաւորաց և
երկրաւորաց զծագումն ողորմու-
թեան քո յայսքան անօրինեալս՝
որ անյոյս համարեալ եմ յամենե-
ցունցդ. զի ուր առաւել եղեն մեղքն՝
առաւել ևս յաւելան շնորհքն քո,
և փառք և մեծութիւն և Հոխութիւն
համարեցար զգիւտ միոյ կորուսե-

լոյ։ և ասացեր խրախ լինել ամենայն երկնային զօրութեանցդ։ այդ որ զի մաստութիւն և զզօրութիւնդ հզօր և աստուածային և զփայլակնդ կենաց յայտնեցեր արարածոց։ և զհաւատս, զմեղս և զանօրէնութիւնս և զամօթ պատկառանաց տանս Ադամայ՝ աստուածացեալ մարմնով միանականիդ քո բարձեր։ Արդ վասն տնօրինական խորհրդածութեան համագոյիդ և մշանջենակցի Հոգւոյդ, մի 'ի զուր գրեր 'ի վերայ իմ զհանդէս որդւոյ քո սիրելւոյ, և 'ի հեղմանէ աստուածային արեան դորա անմահն զիս մի կացուցաներ։ և զմիշտ բարի բնութիւնդ՝ մի 'ի բարկութիւն շրջեր 'ի վերայ որդւոյս կորստեան։ Գիտեմ զբարերարս և զանհասանելիդ Աստուած, զի բարձրացաւ, տարածեցաւ, ծանրացաւ քան զտարերացս կշռութիւն՝ դառնութիւն բազմադէմ անօրէնութենէ իմոյ առաջի քո։ և եթէ հրաժարեն երկնայինքն և երկրայինքս 'ի փրկութենէ իմմէ, յիրաւի են։ Զի հայելի և նկարագիր եղեայ ամենայն յան-

ցաւորաց, և յառաջընթաց կարա-
պետ բազմաչար պատրողին, մինչև
լինել մեղաց մեղք, և գտանիլ անօ-
րէնութեանց անօրէնութիւնք, յան-
ցանաց յանցանք, և անառակութեաց
անառակութիւնք, ստահակութեաց
ստահակութիւնք, անգիւտից չա-
րեաց գիւտ, պատրանաց պատրանք,
ստութեանց ստութիւն, անպար-
կեշտ զառածեալ առ չարն, յառա-
ջել առ չարիս, յօժար առ լկտու-
թիւնս. 'ի կատաղութիւն, յանսահ-
ման յանցաւորութիւն, յորկորամո-
լութիւն, յագահութիւն անյագ,
յարծաթսիրութիւն, և ամենայն
մահահաւաք չարեաց հաւաքիչ. ին-
ձէն գանձեալ անձին իմոյ բազում
ոմեր կորստեան անդնդային, դը-
ժոխս, գեհենս, խաւարս, տարտա-
րոսս, խորխորատս անեզրականս
հեռացեալս յամենայն խնամոց խը-
նամողից: Եւ արդ աղաչեմ զանսահ-
ման և զանբաւ ողորմութիւնդ՝ որ
ամենայն յանցանք յանցաւորաց առ-
քև խբրև զմէտ մի 'ի փոշւոյ են, և
զարդարութիւն միոյ աւուր դարձո-

ղացն առ քեզ գրեա իբրև զհաղար ամ, ողորմեա դառնացեալ էղկելի հիքոյս. և քեզ Հայր սուրբ, Հայր մեծութեան, Որդւովդ միածնիւ և ամենասուրբ Հոգւովդ, փառք յերկնաւորաց և յերկրաւորացս և մշտնջենաւոր գոհութիւն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ

Յիսուս Քրիստոս Աստուած մեր ստեղծիչ ամենայն լինելութեանց երեւելեաց և աներեւութից, ծոցածին ծնունդ անծնին, անբաւութիւն ահաւորիդ, զոր ոչ ոք յէից ետես, բայց միայն 'ի Բանէդ նորին. և ոչ ոք յաներեւոյթ խորս էութեանն նորա հասաւ, բայց միայն 'ի բղխմանէ Հոգւոյդ, որ եւդ մշտնջենաւոր համագոյութեամբ առ Հօր և 'ի Հօրէ 'ի վերս քան զկարծիս երկրաւորաց, և երկնային բնութեանցն, յորս ամենայն հրեղինացն հանդէսք նկատել կամ ակնարկել 'ի փառս էու-

թեանդ ոչ կարացին։ Եւ յայդքան յանբաւութեանցդ վասն կորուսեալ պատկերի քո տանս Ադամայ որ գերեալ յատակս մահու հրամած տարտարոսին գանալի վերոք ապտակեալ 'ի բանսարկուէն, առ ոտս նորա տապաստ անկեալ կայր։ Զոր տեսեալ զայնքան տառապանս տարժանելոյն, որ անտեսդ ես յէութեան Աստուած բանդ այնչափ զօրացաւ ողորմութիւն քո առ ազգս մարդկան, մինչև հարկեցուցանէր զանհարկելի բնութիւն օրհնելոյ քո Հօր, և փառակցի Հոգւոյդ և 'ի դուրս բխեալ 'ի ծոցոյ ծնողին ծայրագոյն անիմանալի լոյսդ էական ետուր զանքան և զանորակ աստուածութիւնդ յատակ մահու ընդ ամենեցուն։ Եւ 'ի հաշտութիւն մեզ շարժեցեր արարչդ զարարչդ ամենեցուն՝ առաքմամբ քո 'ի խնդիր մեզ կորուսելոցս։ Եւ զայդքան ահաւորութիւնդ ծրարեցեր յարգանդի սուրբ կուսին. և կերպարանդ Հօր եղեր կերպարան մարդկան, և որ փակեալ ունէիր ընդ քև զամենայն տարր, փակեցար ընդ ժամանա-

կաւ։ Յորմէ զարհուրեալ պակեան զօրք վերինք և ամենայն բանակք անմահից սոսկացան երկեղալից դողութեամբ. զի զոր ծոցն Հօր միայն կրէր, ծնեալ եղեր յանարատ կուսէն Մարիամայ. և զոր Հոգի զօրութեան քո զէական զօրութիւդ միայն Ճանաչէր, ամփոփեցար 'ի խաւարաղգած մարմնոյ, զոր հրեղինացն հանդէսքն ոչ կարէին ակնարկել յաթոռ փառաց, խանձարրատատ եղեալ եդար 'ի մսուր։ Որ զամենայն էութիւնս կերակրէր բան հրամանի քո, կաթամբք սնար սրբուհւոյն։ Եւ զոր քերովբէական զօրք աթոռոցն բառնալ ոչ կարէին՝ 'ի գիրկս նորա հանգեար։ Որ զերկինս երկնից պատուանդան ոտից քոց ունէիր, 'ի յայրին բազմեցար։ Եւ որ զամենայն էակս յոչէից գոյացուցեր, ոչ գոյ տեղի ինչեւանի։ Ընորհքդ և փառքդ երեսացդ Հօր համբուրեցար շնթամբք հողեղինի։ Եւ որոյ զօրութիդ զհողմ և զհուր հատանէր, թլփատեցար. և համօրէն եղելոցս արարչդ իբրև զստեղծուած ընծայեցար բարձրե-

լոյն. յորոյ յերեսաց ահէդ փախ-
էին երկինք և երկիր, փախեար 'ի
Հերովդէէ. և որ զամենայն շրջանս
երկնաւորացն ձգեցեր, շրջեցար 'ի
յարկս մեղաւորաց. և զամենայն
վերուստ տառապանաց նանրութեան
կենցաղոյս կրեցեր, բարերար, բաց
'ի մեղաց, վասն մեղաւորացս և յա-
պրատամբելոցս յերեսաց քոց. զի
զյանցանս և զանօրէնութիւնս մեր
հաճեցար քոյով ասուածայեալ
մարմնովդ բառնալ։

Եւ արդ ես եղկելի հէգս և թշուա-
ռականս, որոմ զաղբալի մոռք կա-
ցից առաջի աներևութից տեսողիդ.
զի փոխանակ այդմ անճառ սիրոյ ո-
ղորմութեան քո, և առատաբուխ
պարգևացդ առ նուաստութիւնս
իմ երեւեալ, ամենայն անառակու-
թեամբ ոլորել զկեանս իմ, արտա-
մերժեալ գտայ յերեսաց քոց, և ե-
զէ անդունդք ամենայն չարեաց, քան
համօրէն եղելոցս տեսակ, և բարկա-
ցուցի զանբարկանալի բնութիւն բարձ-
րելոյդ։ Զի արարի չարիս մեծամեծս
անթիւս և անպատում, բիւրադէմս

և ահագնալուրս, որոյ ոչ գոյ բաւ. զի որչափ առաւելան շնորհք բարե-
րարութեանդ քո առ իս քան յա-
մենայն որդիս մարդկան, և առաւել
բազմացուցի զյորձանս մթութեան
մեղաց, զահաւոր և զանճառ չարեաց
զգայութիւնս: Եւ պառակտիչ և
վանիչ եղէ քո երանաւէտ դան-
ձուցդ, և կործանեալ ապականեցի
զոսանձալ փառաց քոց, և մերկա-
ցեալ գտայ յամենայն զարդուէ կա-
պուտից երկնից արքայիդ. թէպէտ
և աջ ամենազօրիդ բուռն հարեալ
ունէր զիս հանապազօր, զի մի 'ի
վերն յաւիտենական կորստեանն ան-
հեցիմ. և ակնարկումն ողորմութե-
քո 'ի չարին պատրանաց 'ի բաց հեր-
քէր: Սակայն իմ կափուցեալ զաչս
հոգւոյս միշտ զնաւարն անդնդա-
կուալ շշաքեցի, և ոչ յիշեցի միշտ
զբարեաց քոց թեւարկութիւն: Որ
յարգանդէ և յորովայնէ մօր իմոյ
մինչև 'ի չարալուկ ժամանակ ծե-
ռութեանս իբրև զհոսանս անձրևաց
'ի վերայ իմ տեղացեր. և կամ որ-
չափ զտաղտկացեալ անօրէնութիւ-

իմով զանց արարեր, և վերացուցեր զցասումն բարկութեան քո, և հան-
դուրժեալ համբերեցեր չարեաց գը-
տողիս, թէ 'ի քանի վշտաց և 'ի փոր-
ձանաց հասելոց 'ի վերայ իմ անվը-
թար պահեցեր զիս, փրկիչ. և կամ
յորքան խորոց վերածեր զիս, և կամ
'ի քանի վարմից վսերական վիրա-
գին կորզեցեր զիս, կեցուցիչ. քան-
զի ոչ այնչափ հրաշագործեցեր երից
մանկանցն 'ի հնոցին որչափ հնա-
ցեալ չարիս: Եւ ոչ մեծին Դանիէլի
գտաւ առաւել խնամք քո որպէս առ
անբերունակ որթս, և ոչ Իսրայէ-
լացին քան զիմս գերազանցեալ
գտաւ զարմանս անցանել ընդ անբա-
ւութիւն խորոց Կարմիր ծովուն, և ոչ
հրաշալիքն Յունանու քան զիմս վե-
հագոյն երևեալ գտաւ: Զի անթիւք
բիւրք բիւրուց ըստ այսմ օրինակի
իմոյ անարժան անձինս 'ի քէն հան-
դիպեցաւ հիւսզօր բարութիւնս:
Զոր թէ ամենայն յաւիտեանք ժա-
մանակք ինձ լինիցին և բնաւին լե-
ղուք հրեղինացն և մարմնաւորացս
առ իս համահաւաքեալ գրաւին, ը-

ղորմութենէդ քո Հառել ոչ կարեն, և զբարեացդ առատութենէդ քո-
վանդակել ոչ կարեն։ Եւ 'ի թար-
թել աչաց միայն ոչ գոտաւ սիրտ իմ
սուրբ առաջի քո։ Թէ յորքան օր-
հասական կորստական մահուանէ
ապրեցուցեր զիս բարերար, և կամ
'ի քանի աներևոյթ թակարդից
թշնամւոյն կեցուցեր զիս փրկիչ,
և 'ի քանի հնարից հնացեալ վի-
րագին փրկեցեր զիս անհաւատ Ա-
ստուած։ և որչափ հնարս փրկութե-
եդեր ինձ, և ես ոստուցեալ 'ի ձե-
ռաց հզօրիդ և անկայ 'ի կապանս
կապարանի կորստեան կարապե-
տին, և ոչ յիշեցի զանզրաւն խրախ
նախախնամութեան ահաւորիդ 'ի
վերայ չարագործիս, այլ միշտ և յա-
ւիտեան անխորշ և անպատկառ կա-
ցի յերեսաց քոց, և զանապառ յա-
ւիտենից զմահուն արբի զբաժակ։
Քանիցս անգամ խոստացայ անկա-
նել յերամս հօտի քո, և դէշ դա-
զանաց անկայ։ և կամ քանիցս ան-
գամ եղի դաշինս դիմել 'ի գրուն
քո, և առատանօք չարին կապեալ

եղէ. քանիցս անգամ երդմամբ հաստատեցի հեռեալ առ հովիւդ երկնաւոր, և դարձեալ ձեռնարկեցի յերկուսն մահու։ Կամ քանիցս անգամ եդի միջնորդ քեզ զերամս սրբոց՝ անխրամատելի պահել զօրէնս քո, և դարձեալ'ի տուռունս մեղաց շաղապատեալ եղէ։ Քանիցս անգամ օրինաղանց և ուխտադրուժ եղէ առաջի աներևութից տեսողիդ, և կամ քանիցս անգամ շարժեցի զաթոռ աստուածութեանդ անառակ վարուք իմովք։ Քանիցս անգամ յայտնեցեր ինձ զմուտս ճանապարհի դրանց երկնից, և ես դիմեցի առ անդնդամած խաւարն. թէ որչափ պատքեալ և ծարաւի կացի յանմահական թոշակէն, և ոչ յագեցայ՝ կայծականց հրոյ դեհենին կիզանելով զմարմին իմ։

Եւ արդ զի՞նչ արարից և կամ ո՞ւր թագեայց յաներևոյթ տեսողէդ. և կամ որո՞վ օրինակաւ և հնարիւք ապրեցայց յահագին դատաստանաց քոց, զի վհատեալ եմ և'ի կապանս անյուսութեան անկեալ. և ճար փըր-

կութեան ոչ զոք ունիմ, բայց միայն
'ի յայտնեալ փրկութենէդ աշխարհի։ Զի եթէ զերկինս ունիմ բարեխօս, արձանացեալ է 'ի վերայ իմ որպէս պղինձ 'ի տեսութենէ բազմազան չարեաց իմոց։ Եւ եթէ զլուսաւորս բարձանց, խաւար անօրէնութեան իմոյ տարածեալ է ընդդէմ Ճառագայթից նոցա։ Եթէ հառաչեցից առ երկնային զօրութիւնդ, շարժեալ են գաւազանաւ բարկութեամբ անբաւիցն 'ի վերայ իմ։ Եւ եթէ կարդացից առ սուրբս քո, դարձուցեալ են զերեսս իւրեանց սակս սաստկավէր չարեացս։ Եթէ աղաչեցից զտարերս աշխարհի. ոչ ունին լսել պաղատանաց իմոց. զի տաղտկացեալ են 'ի չար շարաւոյ դառնավիժան յանցաւորիս։ Եթէ կոչեցից յօգնականութիւն կորուսեալոյս զազգս որդւոց մարդկան, վէրս 'ի վերայ վիրաց եդեալ՝ առաւել սաստկացուցանեն 'ի վերայ պարտաւորեցելոյս զպարտս պատուհասից. քանզի ամենայն եղելութիւնք անեղիդ լցեալ են սաստիւ բարկութեան 'ի վերայ արժանաչար պատժապարտիս։

Եւ արդ տէր բարերար յո՞ երթայցեմ յոգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց. զի ա-խեալ փակեցի ես ինձէն զպատապարան յամենայն եղելութեանց զոր ձեռն հզօրիդ արար, և ակն ամենակալիդ նկատեաց: Այլ ամենայն անհնարութեանց հնար դու ես, և ոչ փակի ընդ սահմանաւ տկարութեանց կարողութիւն անեղիդ, և ոչ կշռի մտօք և ոչ չափի անչափելի բնութիւնդ. զի ըստ աստուածային ձայնիդ կայ ես ինձ յոյս փրկութեան, եթէ կամիս և անյիշաչար լինիս ըստ քում ամենաբարի և անփոփոխ տէրութեանդ: Վասն որոյ հառաչմամբ սրտիւ և ամօթալից կորացմամբ կարկառեմ զաչս առ երկնաւոր նստապետդ, և ունիմ աղերս և բարեխօս առ քեզ զքո անձառ ողորմութեդ զստուգութիւն, զէութիւն և զփառս քո օրհնելոյ, և զհամագոյութիւն հոգւոյդ սրբոյ, զերանեալ երրորդութեանդ միութիւնդ, և զարժանն զօրութեանդ և զուրախութիւն աննկատելի որ'ի մէջ երեքսրբենիցդ,

զբրկակցութիւն գերակայիդ ընդ գերալրական տէրութեանդ, զահեղ սուրբ անուն իսկական ինքնութեդ, և զանձառ ծնունդդ հայրական, զարտաքայլումդ միշտ լուսոյդ 'ի մշտնջենաւորէն, զծագումն անորակիդ յանքանակէն, և զերդս փառաւորական օրհնութեանն հասիցն առ քեզ բերել հաճութեամբ, և զահագին տնօրէնութեանն խորհուրդ։ Նայեա յիս գթութեամբ, քաղցրութեամբ և ողորմութեամբ ըստ քում անհաս մարդասիրութեանդ. հերքեա զխաւար մթութեան մեղաց, և շինջո զբոց անօրէնութեան իմոյ առաջի երեսաց քոց։

Յիշեա յիշեա զանքնին և զանձառ գթութիւնդ, և արկ առաջի անսահման տէրութեանդ զնչումն քո 'ի հայրական ծոցոյդ, զծնունդ քո յամենասուրբ կուսէն, զխանձարրին, զ'ի մսուր դնիլն, զկաթնասուն լինելն, զընծայիլն, զտարաշխարհիկ լինելն յԵգիպտոս, զշրջիլն ընդ մեղաւորացս, և զսահմանիլն անսահմանելոյդ, և զփակիլն ընդ ժամա-

նակաւ, զի վասն մեղաւորացս զա-
մենայն վիշտս նանրութեան կենցա-
ղոյս կրեցեր։

Յիշեա յիշեա անհասանելիդ Աս-
տուած, զմկրտութիւն քո սուրբ,
զխոնարհումն դլխոյ դերագունիդ
ընդ ձեռամբ կարապետին, զփորձիչն
'ի սատանայէ, և զաստուածահրաշ
նշան սքանչելեացն զոր ցուցեր առ
ազգս մարդկան, զտառապանս աշ-
խատութեանցն զոր կրեցեր 'ի տի-
րասպան ազգէն, զի վասն մեղաւո-
րացս հաճելի եղև քեզ այդ ամենայն։

Յիշեա յիշեա միասնական էութի-
հօր, զհանդէս մահու չարչարա-
նացն, զօրն այն օրհնեալ՝ յորում մե-
ռուցեր զքեզ խորհրդաբար 'ի սուրբ
վերնատունն, և զաստուածային մար-
մին և զարիւնդ շնորհեցեր 'ի փրկու-
թիւն քո արարածոցս, զասպարէզ
նահատակութեան քո 'ի ձորն Կեդ-
րոնի, զկայլակս քրտանց արեանդ
և զթորումն արտասուաց, զահ և
զերկիւղ ահաւորիդ մարդասիրա-
պէս, և զանկանելն առաջի բարձրե-
ալ քո հօր, զի վասն մեղաւորացս

սիրեցեր համբերել ամենայնի ամենակալդ Աստուած։

Յիշեա յիշեա անտանելի բնութիւն հօր, զմրրկումն խուժանին Իսրայէլի 'ի վերայ ահաւորիդ, զկապիլն, զքարշիլն, զանուր պարանոցիդ, զքանդիլն, զծանակիլն, զանձառ հայհոյութիւնն, զթուք ամօթոյն, և զապտակ ծառային, զի վասն մեղաւորացս կրեցեր զամենայն յաւիտենից Աստուած։

Յիշեա յիշեա խսկութիւնդ անորակին, և զօրութիւնդ անքանակին, զատենի կալն առաջի պոնտացւոյ Պիղատոսի; զայպանիլն 'ի Հերովդիայ, զհարուածս եղեգանն, և ըզվէրս թիկանցդ, զկապումն բազկացդ, և զմերկանալն աստուածային մարմնոյդ, և զպսակն փշեղէն, զի վասն յանցանաց մերոց համբերեաց էակիցդ Հօր։

Յիշեա յիշեա անմահ և անմահից թագաւոր, զօրն սոսկալի յորժամ բարձեր զդատապարտութիւն զփայտն 'ի վերայ կենաաբեր ուսոյդ, և կանգնեցեր զառիթն կենաց 'ի մէջ երկրի,

զժամն այն օրհնեալ յորժամ տա-
րածեալ ունէիր զբաղուկս քո 'ի
վերայ նորա, զՀաշակ լեղոյն և քա-
ցախին, զբացումն կողիցդ, զբևե-
ռացն զկարծրութիւնն, զհայհոյու-
թիւնն. զի վասն մեղաւորացս յանձն
առեր զամենայն:

Յիշեա յիշեա մի մոռանար, կե-
նարար, որ վասն յանցանաց մերոց
զէլի էլին առ հայր կարդացեր, և
սպանողացն քոց խնդրեցեր թողու-
թիւն: Յիշեա յիշեա և զխոնարհումն
պարանոցիդ 'ի վերայ խաչին, զա-
ւանդումն հոգւոյդ, և զհեղումն ա-
րեանդ, զպատառակալէին և զ'ի
կարդ մեռելոց անկանիլն, զտքնիլն 'ի
տապանի, և զյարութիւնդ աստուա-
ծապէս. զի վասն կորուսեալոցս կրե-
ցեր զամենայն կիրս տնօրինական
խորհրդեանդ, որ միշտ և էիր ես
և կեաս յաւիտենից ահաւորդ Աս-
տուած:

Եւ արդ տէր Յիսուս անքնին և ան-
սահման և բարերար, զինչ արարից
հէ.քս և եղկելիս, հոգս և մոխիրս և
անարժանս, ոչ առաջի աստուածու-

թեանդ միայն, այլ և զաղբալի ե-
ղեալ տեսիլս ամենայն գործոց քոց,
և արտաքսեալս 'ի կենդանական
գոյից եօթնակայեալ կենցաղոյս,
դատապարտեալս 'ի բնաւիցս աս-
տէն, և զյաւիտենական տանջանացն
ստանձնեալ զկորուստ: Այլ թէ ո-
զորմիս ասատուածաբար ըստ քում
անձառ տեսչութեանդ, և ոչ գրես 'ի
վերայ իմ 'ի զուր զանօրէնութեան
քո խորհուրդ, և կամիս մեծազօր
առնել զփառս ճոխութեան քո 'ի
հանուրս ամենայն, կարող ես փո-
խարկել զիս յառաջին բարութիւնս.
ոչ ասեմ 'ի շնորհն որդեգրութեան
յորմէ արտաքսեցայ, այլ միայն 'ի
ստրկաց ստրկութիւն. ոչ 'ի հարա-
զատ ընտանութենէ յորմէ արոհեցայ,
այլ յետին տնանկութիւն. ոչ 'ի հա-
ղորդութենէ երկնաւորացդ հանդիսի
յորմէ արտաքսեցայ, այլ 'ի ծառայ-
ութիւն անարդաբար դոցին ծառայ-
ակցացն. ոչ 'ի հրաւիրեալ երկնաւոր
հարսանիս գերազան փեսայիդ, այլ
յայնոսիկ ոլոր արժանաւորին հայ-
էլ 'ի փառս նոցա: Ոչ 'ի բանակս

բազմելոցն՝ի յառաջասան երրորդա-
կան տեսչութեդ, այլ՝ի ստորինս յայս
յերան վերջացեալ մշակացն. ոչ՝ի
սեղան երանաւէտ ալքայութեանդ,
այլ միայն ըստ արտաքսելոյ շան՝
արժանի լինել փշրանաց անկելոցն.
ոչ՝ի հրճուումն անկոց դրախտին,
այլ մերձ՝ի հրեղէն ցանգ սրոբէա-
փակ պարսպին։ Ոչ միայն այդմ ա-
մենայնի, այլ այնչափ միայն ողորմեա
զի հնար լիցի ինձ յահագին և յան-
ներելի գեհենէն պրծանել, և յան-
եզր յանսահման և յանթիւ պատու-
հասիցն ապրել շնորհիւ և ողորմու-
թեամբ քո, որ ես օրհնեալ յաւի-
տեանս։

Գ

Տէր Աստուած զօրութեանց, ա-
հաւոր, բարձրեալ, հզօր, անսկիզբն և
անբովանդակելի. արարիչ ամենայն
եղանութեանց վերնոց և ներքնոց,
էութիւն անբաւ, համբարձեալ, յան-
ակնարկելի յաւիտեանս, անպարու-

նակելի էից և անէից, իսկութիւն
ինքնագոյ, անհաս ամենայն մտաց
սլացմանց, հեռացեալ՝ի բնութենէ
բոլորից, ինքնասահման անեղելու-
թեան, անպատճառ յաւիտենակա-
նութիւն, անշարժ մշտնջենաւորու-
թիւն, յաւէտ միշտ ինքնութիւն,
անհետացեալ՝ի կարծեաց ամենայն
հոգւոյ, անքանակ և անորակ, անտե-
ղի և աննմանութիւն, անձև և անա-
նուն, անօրինակ և անտեսիլ, փա-
կեալ արտաքոյ յուզման ամենայն
զգալեացս։ Եւ աննկատելի բնա-
ւիմբ որ ինչ եղելութեանցս են տե-
սակք, յորոյ աներևոյթ շարժմանէ
կամացդ անգոյութիւնք՝ի գոյութիւն
փոխարկեալ ըստ իւրաքանչիւր սե-
ռի մասանց, բաժանեալ առին ըզ-
սահմանս բնաւին եղելութիւնք ա-
մենազօրիդ, և յակնարկութենէ ան-
սահման ահաւորութեան փառացդ,
հեղեալ անբաւ հրեղինացդ բանակք
տարածեալ կալան զանիմանալի ե-
ռանաւէտ աշխարհացդ զանեզրու-
թիւն, զոր պարզեալ որոշեցեր գե-
ղազարդեցդ հանդիսարան։ Եւ՝ի

շարժել զլթանց ահաւորիդ Աստու-
ծոյ, հոսեալ'ի հանուրս ծայրագոյն
լուսոյդ Հառագայթ, զանպատրաստ
խորացեալ խաւարին հալածեալ
նեմուլթիւն, կենդանածնեաց ըզ-
բոլորիցս տեսակ, և ողորմուլթիւն
նախախնամական սիրոյդ յանՀառ
էուլթենէդ թափեալ, ելից հոգւով և
իմաստուլթեամբ, շնորհօք և զօրու-
լթեամբ զամենայն արարածս, որ
նկարակերտեալ'ի քումէ հրամանէդ
եկին 'ի մէջ։ Որ անբաւդ ես և
անեղ և անստեղծ, աննիւթ և աննմա-
նուլթիւն, որոյ զանունդ միայն ոչ
բարձրուլթիւնք և ոչ խորուլթիւնք,
և ոչ ժամանակք և ոչ որ ըստ մեզ
կարող են կրել շնորհիւ և բնուլթի
միոյ որդւոյ Յիսուսի Քրիստոսի,
բխող էականի Հոգւոյդ խակուլթիւն
և լցուցիչ ողորմուլթեան, անկանիմ
առաջի անհաս էուլթեանդ ամենա-
ստեղծիդ անծայր անդունդս անօրէ-
նուլթեան, և աննկատելի խորխո-
րատս վէրին յաւիտենից, հայցեմ'ի
հանուրց վերատեսչուլթենէդ վհա-
տեալ վսերային վերամբարձեալ

ծովս անտարացոյց ջանորդիս ջա-
րեաց։ Սոսցիր ամենազօր քեզ ա-
նուն առաւել առ իս յուսահա-
տեալ թշուառիս նորոգութեան. կորո
զդիր մուրհակի պարտեաց յոգնա-
համար մեղուցելոյս, և զարժանա-
հաս վճիռ մահու հոգւոյս ջրեացես
կայլակօք արեան որդւոյ քո սիրե-
ելոյ։ Եւ մի փակեր դիմելոյս առ քեզ
զառագաստ սրահի կենացդ յարկի՝
զանզննելի զանխորհելի զանիմանա-
լի աստուածութեանդ. ողորմութեամբ
գրունք քո բացցի բիւրապատիւ
պարտաւորիս, և զհիազօր անուն քո
սուրբ հրաշապատումն կացո սակս
իմոյ սատակաւէր պարտաւորելոյս՝ի
բոլոր բնութիւնս քո արարածոց, զի
անսահման է ձիր պարգևաց ահա-
ւորիդ Աստուծոյ՝ի վերայ ահաբե-
կեալ հոգւոց։ Մի տրտմեացես՝ի բա-
րեաց քոց բազմականացդ, բազմա-
գութ. մի պահեր՝ի գանձարանիդ
զնիւթեալ պարտուց իմ անօրէնու-
թիւն։ Մի կնքեր՝ի քսակ բարեացդ
զզազրութեանցս իմ գարշութիւն,
մի տարածաներ առաջի ամենատես

աչացդ զանթիւ կերպարանս չարի անօրէնութեան իմոյ մտացս։ Մի հրատարակեր 'ի մէջ երամի երկնադումար դասուցդ, մի երևեսցի մերոյ մթութեան չարահոտ մեղացս 'ի սահման անծայրագոյն լուսոյդ. և մի արձանացի յիշատակ անցաւորիս առաջի սատուածութեանդ, որոյ անունդ քակտեալ լուծանէ զամենայն ախս աշխարհիս։ Մի երկարս լինձ զկողկայթեալ վէրս 'ի մարմնի իմում ծածկեսցես, և մի զփտութեն նեխութեան ցաւոցս լինձ տնկակից մահու մնացուսցես. այլ բարձ բանիւդ ողորմութեան և հնարաւոր դթութեամբդ։ Հայր մեծի խորհրդոյ մեծ խոցուածոյս զօրեղ սպեղանիս, և կարէվեր կործանմանս բարի այցելութիւն։ Մի որոշեր զիս 'ի գնոյ արեան հարազատի որդւոյ քո սիրելւոյ. և մի վրէժխնդիր լիներ սատամբակելոյս 'ի հրամանէ նորին։ Մի արկաներ ընդ դաւազանաւ պատուհասի զպարտապանս դանձուց նորա, և մի 'ի դերութիւն յաւիտենական կորստեանն մատներ զդահա-

վիժեալս 'ի գերունակայութենէ ան-
քանակին, մի արտաքսեսցես 'ի գաւ-
թէ քումմէ զկորուսեալս, զոր նկա-
տեցին աչք միածնիդ քո վերայ խա-
չին. և մի հեթքեր յարտաքին խա-
ւարն զազատեալ անդամս էակցիդ
քո: Մի կափուցաներ 'ի վերայ իմ
զվիհն մեծ անըմբերելի սատակմանն
յաղագս որոշմանն իմ 'ի սիրոյ նո-
րա, և մի յաւիտեան բարկանար յա-
ւիտենից Աստուած յաւիտենից կո-
րուսելոյս:

Վասն անօրինական տնտեսութե
և նախախնամական սիրոյն միածնի
քո յարարածս՝ զանկեալս 'ի պար-
գևաց շնորհէ նորա ընկալ, և նորո-
գեա յիս վերստին զազատութիւն
կտակ որդեգրութեանն այնմիկ, զոր
առաքեցեր 'ի ծոցոյ մեծութեանդ 'ի
փրկութիւն աշխարհի: Ստացիր զիս
քեզ կրկին նոր արարչութիւն, և
զանուն ահաւոր զօրութեան փա-
ռակցին քո որ կոչեցեալ է 'ի վերայ
իմ, սուրբ արա ճշմարտութեամբ
քով, և մի տար տանիլ գերի ապա-
կանիչ ոճրագործին: Յիշեա զի կո-

չեցեր զիս յանուն միածնիդ քո քրիս-
տոնեայ, և ծնաւ զիս վերատին ամե-
նազօր Հոգիդ սուրբ 'ի հարազատու-
թիւն սուրբ արգանդի. արդ մի կոր-
զեսցէ ստուգանել արկուած չարին
զայնքան խորհրդածեալն 'ի քէն բա-
րեզարդութիւն: Եւ մի զդրոշմ եր-
րորդական դաւանութեանդ մատներ
'ի կորուստ յաւիտենական սատակ-
մանն վասն եռանձնեայ միութեան
համազօրիդ Աստուծոյ, և վասն չար-
չարանաց քո անստեղծ և անեղծ
պատկերիդ:

Հայր սուրբ, հայր մեծուեց, հայ-
եաց 'ի քահանայապետ մեծի խոր-
հրդոյդ Յիսուս Քրիստոս, 'ի բանդ,
'ի սէրդ, 'ի գթութիւնդ, 'ի շնորհսդ,
'ի բարերարութենդ, 'ի կերպարանդ,
'ի կարութիւնդ, յիմաստութիւնդ,
'ի զօրութիւնդ, յամենակալ աս-
տուածութենդ, միաբնականութենդ:
Որ կամաւ քո զամենայն արարածոց
յանցանս իւրով աստուածացեալ
մարմնոյն եբարձ. և այժմ ընդ ա-
մենեցուն բարեխօս ևս առ քեզ կա-
լով սրբել և մաքրել զսպի վիրաց

սուրբ արեամբն իւրով, կացուցանէ անարատ առաջի քո։ Արդ հայեա յիս բարերարութեամբդ անհասութեանդ, անսահման ողորմութեամբդ, անկշիռ առատաբաշխութեամբդ անչափելի. որ քաւութիւն և թողութիւնդ ես բազմապարտեաց, թողինձ զանհուն և զանեզրացեալ անօրէնութեան բեռինս երկնակատարս և զծովածաւալ հոսումն հեղեղաց չարին 'ի վերայ իմ տարածեալ՝ փարատեա որպէս բարերար ըստ քում մշտաբարի ողորմութեանդ։ Հաշտեա անոխակալ և հաշտեցո զստուգութիւն Որդւոյ և Հոգւոյ 'ի վերայ բազմապատիժ պարտաւորիս քան զամենայն որդիս մարդկան, և ընկալ զդառնացեալ անձինս պաղատանս ըստ քում ամենազօր քաղցրութեդ։

Եւ զի՞րդ ես մեղաւորս լի ամենայն յանցանօք կարացից բանալ զբերանս բազմապատիժ առաջի աՀաւորիդ Աստուծոյ, որ մայրս եղէ մեզաց, և կտակ ամենայն անօրէնութեանց, անդունդք խորութեան խաղոց, և ասպարէզ հանդիսարանի

հնացեալ հրապուրողին։ Եւ կամ՝ որոմ ամօթով կացից յանդիման ա-ներևոյթ զօրութեանդ այդ, յորմէ դողան անդունդք, լուծանին տա-րերք, հալին արարածք, սոսկան հրեշտակք, սարսափին ամենայն դե-ղապոյական զօրութիւնք հրեղինացն, և խուսափեալ երկիւղիւ մեծաւ յա-հէ հրաշափառ փառացդ տագնա-պին, և ըստ արժանի մեծութեանդ 'ի յօրհնութիւն, 'ի գովութիւն և 'ի փառաբանութիւն անարժան գտա-նին։ Զի երրորդութիւնդ առ երր-որդութիւնդ միայն է արժանաւոր պատուոյդ սահման. և զամենայն ո-ղորմութեամբ կառավարես՝ անհր-պեղի եղեալ քոյոյդ հեռազօման. քանզի ամենայն տարրական էու-թեան բերան կարկեալ է 'ի քո էա-կան պատուոյդ արժանաւորութեց։ Եւ յահ և յերկիւղ ըմբռնեալ բը-նաւս ամենայն, նա և կաճառք հրե-ղինացն երկիւղալի դողմամբ 'ի քէն սարսեալ սաքրին. և անճառ բնու-թիւնք ահեղակերպին հալեալ տա-պակին 'ի հրակիզմանէ փայլատա-

կանց ահաւորիդ Աստուծոյ. զարհուրելին 'ի հրաշակերտ անճառ ծայրագոյն լուսոյն, և անըմբերելի պարապատեն զդէմս իւրեանց բոցանիւթ թեւօք։ Քանզի եթէ կայր հնար փախստեան, ոչ կարէր կալ երկինք առաջի քո և ամենայն տարրական տեսակս. և երկիր լրիւ իւրով հանդերձ անդնդային հաստատութեանն հեղոյր յայլ ևս անհուն խորութիւն։ Նա ևս երկնից երկինք թէ ունէին ևս տեղի թագստեան, ոչ հանդուրժէր կալ 'ի ներքոյ պատուանդանի ոտից քոց. և եթէ գոյր հնար ծածկութեամբ, ամենայն բանակք անմահիցդ դիմեալ անկանէին 'ի նա յերկիւղալի հիահրաշութենէ արփիափայլ ճառագայթից բազմորինակ թորման լուսոյդ. և 'ի ձեռին քում էր և է և կայ ամենայն շունչք և անշունչք։

Եւ զի՞նդ ես քան զամենայն մարդ եղկելի եղեալս և անարժանս բնաւին երկնի և երկրի առաջի այդմ ահաւորութեանդ յանդգնիմ կարդալ զանուն քո սուրբ անսուրբ անձամբս

և անօրէն մտաքս, որ անբարեսէր դիւացն զազրալի գտայ, թող թէ այդմիկ որ հրեշտակացն բնութիւնքն չէն սուրբ առաջի քո։ Քանզի չէք հնար ճառել կամ ընդ թուով արկանել զանեզրական անսահման չարեացն իմ յիշատակ, և զհարուածոց հոգւոյս տալ զտարացոյց։ Զի եթէ զմիոյ աւուր զչեղեալս միայն բերես 'ի հանդէս, թող թէ զայնքան ժամանակաց անցելոց, որ յարաժամ անծայր անդունդք մրրկաց անօրէնութեան, երկնաշրջան անբաւութիւնք զինև շեղջակուտեալ եղև, կարծեմ թէ ցանկ յաւիտենից այս բացեալ զբերան իւր՝ առցէ զիս 'ի խորութիւն արտաքին խաւարին, և ամփոփեսցէ զիս յանյաղ որովայն տարակացեալ տարտարոսին. կամ փայլատակմունք կիզանողական կայծականց տոչորման անշէջ արփւոյն տեղասցեն 'ի վերայ իմ իբրև զտարափս անձրևաց։ Եւ դարձցի լոյս տուընջեան 'ի խաւարի, և ճառագայթք տարածեալ արեգականս՝ նեռս հրաբորբոքս 'ի վերայ իմ թափեսցեն. և ոչ

հանդուրժեացէ սուր քոցակէզ երկ-
նաւորացն բնաւին առ վրէժխնդիր
վրիժապարտիս ժամանել. և կամ
ոչ ևս անխայտեացէ յիս գաւազան
բարկութեան անբարկանալի բնու-
թեանդ։ Եւ եթէ ոչ էր սանձեալ
ներողութիւն քո զտարերացս է-
ութիւն, փախնուին արդեօք յինէն,
և գժոխք աղաղակէին կորզել առ
ինքեանս 'ի ձեռաց քոց զիս կենդա-
նւոյն. զի դառնացեալ մեղօքս յա-
րաժամ զդառնութիւն որոմանց ո-
զորձեալ վիթերեցի համբարս առ 'ի
նիւթ տոչորման յաւիտենական ան-
շէջ հրոյն։ Զի թէ Ղամէք եօթա-
նասնեակին եօթն եա վրէժս ըստ իրա-
ւանց դատաստանիդ, ապա անթիւ
բիւրս բիւրուց չարիս մեծամեծս,
տանջանս, դանս, մահս և գեհենս
դաժանս պատրաստեալ է ինձ ա-
ռաւել քան ամենայն երամի մեղաւո-
րացն, այն որ զյաւիտենական կորըս-
տեանն կրեցին զվիշտս. զի որ անյիշե-
լին և փոքրն է յաչս իմ երեւեալ ար-
կածք յանցանաց, մեծ է առաջի քո
քան զբիւրաւոր պատժապարտացն

ծանուցեալ : Զի լցեալ գիտութեամբ անտանելոյդ շնորհօք՝ ոչ խորշեցայ և ոչ պատկառեցայ յերեսաց քոց, և ոչ արարի զքաւ'ի թարթել աչաց միայն որ ոչ դառնացուցի զկամս ա-նեղ երրորդութեանդ : Եւ շարժեցի զանշարժ աթոռ ասաուածութեանդ հանապազօր ծանուցեալ և անընդմբերե-լի հրահրանս բոցով յանցանաց . և աչք քո տեսանէր և ականջք քո լսէր, և ամենայն երկնային զօրութեանցդ առաջի հրատարակեալ յայտնի ե-ղեալ յանցանք իմ . և ես յարբեցու-թենէ չարին մրրկեալ՝ ոչ զարհու-րէի, և ոչ սոսկացաւ լկտի դէմք իմ ամօթալի : Եւ թէ զնարդ ներեր և համբերեր ահաւորութիւն բարձրե-լոյդ՝ ես ոչ գիտեմ : Բայց զայս գի-տեմ, որ թէ ողբան երկինք և եր-կիր, ծով և խորութիւն անդնդոց, և ամենայն բանակք անմահիցդ եղե-ղամայրս լինիցին, չեն բաւական իմ անբովանդակելի կորստեանս : Եւ եթէ փոխեսցին ամենայն տեսակք տարրական գոյից մուօք և ընութիւ-'ի կերպարանս մարդոյ, աւաղ ծո-

վու և շնթք անձրևաց հանդերձ ա-
մենայն շարժողական էութեամբ,
համօրէն հարազատք ինձ լինիցին,
և հանցեն առաջի քո արտօսր՝ հան-
գոյն երկնային և երկրային տիեզե-
րատարած ծովուց, ոչ փարատի եր-
կիւղ յաւիտենական կորստեանն 'ի
սրտէ իմմէ, եթէ ոչ նշոյլ ողորմու-
թեան քո հասցէ 'ի թիկունս իմ, զի
քեզ միայն է կարողութիւն փրկել
զիս որ բարձեր զմեղս աշխարհի:
Վասն որոյ ամենասուրբ Երրորդու-
թեանդ Հօր և Որդւոյ և ամենասուրբ
Հոգւոյդ փառք և երկրպագութիւն
այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Դ

Եւ արդ տէր Յիսուս, անմահ և
անմահից թագաւոր, յորժամ յի-
շեմ զառատաձիր պարգևս քո առ
իս, առաւել երկիւղալի զարհուրիմ.
զի ընդ այդքան բարեացդ այսչափ
անօրէնութիւնս մթերեալ ժողովե-
ցի, որ և ոչ չափ ծովու 'ի կշիռս է-

րևի, փոխանակ այնորիկ որ առաւել քան զամենայն որդւոց մարդկան առ իս բազմացուցեր զսէր և զողորմութիւն քո։ Քանզի 'ի սոնէ մօր և յարգանդէ աւազանին առեալ բարձրացուցեր զիս 'ի վերայ բազկաց քոց, հարազատ զիս քեզ արարեր, և զՀայր քո զանքնին և զօրհնեալ՝ հայր ինձ կարդացեր. բացեր զամենայն դրուն հոգւոյ շնորհաց առաջի իմ, և հարանարան իսկ Երրորդութեանդ յօրինեցեր, պարակից հրեղինացն նկարագրեցեր, և հաղորդս աստուածային ընթրեացդ հրաւիրեցեր, և 'ի բարձրութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց հաներ, և առ զուարթունս և տէրութիւնս հետազօտեցեր, պետութեանց և իշխանութեանց արարեր խմբակից և կաճառակից. սերովբէից և քերովբէից հաւասարեցեր, նա ևս գեր'ի վերոյ քան զամենայն իմանալի զուարթնոցն հանդէս՝ հուպ Երրորդութիւնդ կոչելով, ամբարձեր զկնքեալ ախս առագաստացն առաջի իմ, 'ի մասն որ-

դեգրութեամբ վիճակին մակագրելով մատամբդ այդ՝ որով նկարեալ եղև երկինք և երկնային, դրոշմեալ կայ-լակացեալ արեամբդ այդ որ հոսեցաւ յաստուածային կողից։ Յայտնեցեր զանկապուտ դանձդ հայրաշարժ էական տէրութեանդ, և հաղարապետ խորհրդոյն անհաս, և ժառանգորդ մեծութեանդ ահաւորի, զոր խոստացար լինել հայրախնամ սիրով. և ոչ արդելեցեր յամենայն բարութեցդ յանբաւութիւնդ, այլ անձնիշխան կացուցեր զիս, յորս ակնարկելով ցանկալի քան զհանուրս երևեցուցեր ըստ քում առատաձեռնութեանդ զոչ արժանիս կենաց։

Եւ ես յայդմ անբաւ բարձրութենէդ կամաւ խոնարհեալ անկայ 'ի տիղմ և 'ի գռեհս մեղաց. և փոխանակ այդմ անճառ լուսոյդ ուր ամենայն բնութիւն հրոյ և լուսոյ բնաւին երևեալ յարարածս յամենայն ժամանակս՝ երևեալ առ այդ լերև զփոշի անարդ խոտոյ։ Եւ փոխանակ սիրոյ երկնից արքայիդ գիրկս

արկի մահաբեր երկանց կենցաղոյս, որ է ստուեր և երազք զարթուցելոց, ունայնութիւնք ունայնութեց և վիշտք հանապազորդեան: Եւ խրախացայ 'ի դիրկս որջացեալ օձին, որոյ թոյնք դաժանութեան կիզեալ զարարածս աճիւն հնոցի դործեաց: Եւ ցանկալի եղեն ինձ առօրեայ դառնութիւն մրուր մեղաց հոսանուտ բնութեան քան զանհամեմատ ուրախութիւն երկնաւոր հարանանրանիդ և զտեսիլ անձառ ճառագայթի հիահրաշութեան բազմելոցն 'ի փառս ահաւորութեան բարձրելոյդ, որ բնաւ ամենայն մեծութիւն բոլորից կենցաղոյս և ցանկալիք աչաց և մտաց իբրև զստուեր երազոց: Հոսեցայ սահեցայ անկայ եղկելիս 'ի յաւիտենից գերալրութենէդ ամբարձման անձառից 'ի յանքակ խորութիւնս խորոց, որ անդունդք անդնդոց իբրև զերկինս երկնից 'ի վերայ իմ բարձրացեալ կայ: Եւ փոխանակ ակնարկելոյ ծայրագոյն լուսոյդ՝ այդ որ բնաւին բնութիւն լուսոյ և հրոյ որ եղեալ է յարարածս՝

իբրև շօշափելի մէգ թանձրատարած
և զվիմարդեան կարծրութիւն երևի. ա-
ռի զյաւիտենական կորստեանն սահ-
մանս որ կիզու զհուր իբրև զնուիս և
առ չարութիւն որդանցն 'ի նմանէ
հոսելոց զոր պատրաստեալ է սա-
տանայի և կամարարաց նորա՝ ամե-
նայն թոյնք սողնոց որ 'ի կենցաղս
եղեալ են և լինին. քաղցրադոյնք են
քան զճաշակ միոյ ջուրց ծարաւաց
անձրևաց : Եւ փոխանակ պտղոյ ան-
մահական դրախտին և խրախուութե
երկնաւոր սեղանոյդ և երգոցդ ան-
մահից ճաշակեցի զկայծակունս հրոյ
գեհենին, և արբի զյորձանս բոցե-
ղէն գետոց, և լալ աչաց և կրծել
ատամանց եհաս ինձ բաժին, և տո-
ջորումն տապոյ արտաքին մրրկացն
խաւարի եղեն ինձ հանգիստ : Եւ
որովայն անշէջ բոցոյն որ 'ի գոգս
իւր գրաւեաց զդիւադարան եղկե-
լիս, և ըմբռնեցայ փախուցեալ յե-
ռեսաց ահաւորիդ և անկայ 'ի բովս
վարմից տարտարոսին. առ տապ այնր
տապակաց որ իբրև զպաղումն ձմե-
ռայնոյ է՝ համօրէն թոյնք դառնու-

թեան հիւսիսային սառնամանեացն
ի բերև զհուր բորբոքեալ երևի առա-
ջի բնութեան տարտարոսին, յորոյ
յատակն սատակման անկեալ կամ
առաւել ևս պատժոց արժանաւորս:

Վրիպեցայ մերժեցայ յանպա-
տուամ և յանիմանալի բազկացդ յան-
նկատելի ահաւորութեց երեքսըր-
բենից փառացդ, զորոյ միայն զէու-
թիւն հրամանատարի միոյ ոչ կա-
րեն բովանդակել երկրային բնու-
թիւնքս: Եւ քակտեալ լուծանին
յարտափայլմանէ փայլատականցն
հրանիւթիցն հոգեղինաց, որպէս ե-
րամք երկնաւորացն յահեղահրաշու-
թենէ փառաց քոց. և ամենայն երկ-
րաքարշքս պատրանք են պատրողին
և առասանք կապանաց վարմից անե-
րևոյթ խորացելոյ բանտին և պարա-
ւանդ յաւիտենից կորստեանն, ցեցք
և մէջք շարաւոյ ժայթքեալ որ-
դանցն, զորոյ զհետ երթեալ եղկե-
լիս կամակոր մտօք՝ զայնքան տաղտ-
կութիւն դառնութեան քաղցր 'ի
վերայ իմ վարկանէի պատահումն:
Եւ յանդունդս խորոց հրամած նսե-

մութեանցն այն հրճուէի փոխանակ վերնագունի անճառելի խրախութիւն փառացդ, որ ոչ ակն տեսանելի է և ոչ ունկան լսելի և ոչ 'ի միտս մարդոյ անկանելի զոր պատրաստեցեր սրբոց քոց, աննախանձդ Աստուած:

Եւ արդ ես տարակուսեալ տագնապեալ 'ի տուռունս մեղաց հնդեկին զգայութեամբս՝ զյաւիտեան կորստեանն գրաւեալ դատակնիք՝ անպատասխանի եղեալ առաջի ահաւորիդ, զի՞նչ ասացից և կամ որո՞վ ամօթով բացից զբերան իմ և կամ որո՞վ մտօք զանչափ յորձանս մերկայ ծովուս բերից 'ի համար առաջի ծածկագիտիդ, որ և անգործքն ես հրատարակեալ երևին առաջի քո: Զի ո՞ կշռէ զախս յաւիտենից բաց 'ի քէն տէր, և ո՞վ բերէ 'ի թիւ ըզծփումն տարածման աշխաց ծովու, եթէ ոչ ամենակարող զօրութիւն քո և ամենազօր ձեռն քո, անեղդ և անհնարինդ երկնաւորաց և երկրաւորաց: Քեզ ամենայն ինչ հնարաւոր է, և հաշար ամն իբրև զմի օր

և մի օրն իբրև զհազար ամ համա-
րեալ է զքեզ յողորմութիւնս և 'ի
գթութիւնս։ Մի՛ նշաւակ չարեաց
կացուցաներ զիս 'ի մէջ երկնից և
երկրի, և մի՛ արմատասցի 'ի միտս ա-
մենաողորմիդ վասն իմ նկարուն չա-
րեաց։ Մի՛ տարապիր առներ 'ի մա-
տենի կենացդ զոր նկարեցին մա-
տունք քո օծմամբ իւղոյն օրհնու-
թեան, և մի՛ զորդեգրութեան կը-
տակն իմ տար 'ի ձեռն թշնամոյն
արդարութեան։ Մի՛ զկշիռ ապրս-
տամբին իմովս ծանրացուցաներ, և
մի՛ տար գերի վայրենական դայլուն
զսիրելի ծնունդ սուրբ աւաղանի
քո, և զնախկի գաւանողս եղեալ
երրորդական շնորհիդ։ և մի՛ տալ
ճարակ յաւիտենից հրոյն զոր ներ-
կեցեր արեամբ մարմնով, և 'ի գինս
արեան էական աստուածութեանդ
գրեցեր։ Զօրացո զաստուածային
կամս բարեացդ 'ի վերայ իմ որպէս
'ի հեռուստն մարմնաւորութեանդ
զօրացաւ, և համարեա կրկին 'ի վե-
րայ իմ զկիրս անօրէնութեանդ կա-
տարեալ։ և առաւել արարչութիւն

և հրաշագործութիւն ինձ յայտնեա յերկինս և յերկրի զի կարող ես։ Եւ մի յաղթեսցէ նկուն եղեալն'ի քում անսահման զօրութենէդ. և մի արձանացի մթութիւն խաւարին առաջի այդմիկ, որ և զհրակիզիչ բընութիւնս հրդեհես. և մի կիզցէ բոց հրաթոյնք կայծականց բանարկուին զանծայր ծովդ աննշանակելի, և մի յանեզրական յորձանս քո արծարծեսցի այրումն բոցոյ նորա։ Մի կափուսցէ մէգ տարբերական զանբաստուեր լոյսդ արեգականդ արդարութեան, և մի երևեսցի անհուն խորութիւնք սանդարամետականին գեր'ի վերոյ բարձրութեդ այդ, որ բիւրք բիւրուց և հազարք հազարաց անդունդք անդնդոց'ի ներքոյ քո փակեալ կայ. և մի զանփոփոխելի կամս քո բարի շրջեր'ի դառնութիւն վասն որդւոյս կորստեան։ Զի զի՞նչ է մեռ մի փոշւոյ առաջի քո, կամ տերև մի անկեալ'ի ծառոյ, որ և ոչ ամենայն արարածոց յանցանք այնչափ երևի առաջի ողորմութեան քո։

Յիշեա յիշատակդ յաւիտենից,

զանսահման սէրն յաւիտենից, յորս
ոչ հետազօտեցին երկնայինք և երկ-
րայինքս, և արկ առաջի գթութեդ
անբաւական զիջումն քո վասն մե-
ղաւորացս 'ի հայրական ծոցոյդ. զի
վասն մեր աղքատացար, անբովան-
դակեալդ երկնից և երկրի, և զհան-
դէս մարտիրոսական կրից կրեցեր
վասն կորուսեալոցս 'ի կորսական
աշխարհէս, և անճառ մեծութիւն
ստացար քեզ վիշտս չարչարանաց,
և պատիւդ անզուգական, զթուքն և
զապտակն, փառքդ անքնին զմահ
խաչին, և խրախութիւնդ անհամե-
մատ զճաշակ դառնութեան լեղւոյն,
և բովանդակ զպարտիս ամենայն
յանցանաց մերոց մարմնովդ քո
բարձեր, բարձրութիւն անհասու-
թեան հօր: Մեռուցեր զանմահու-
թիւնդ ընդ մեղուցելոցս 'ի գերկս
էական ծնողիդ, և հանապազօր ևս
զնոյն խորհրդածութիւն մահու քո
կատարես՝ անծախաբար պատա-
րագեալ յընդհանուրս արարածոց,
անարատ գառն Աստուծոյ և ծոցա-
ծին ծնունդ հօր հանդերձելոյ աշ-

խարհիդ։ Անփոփոխելի էութեամբ մնանես ընդ ամենայն դրունս, և մերձ՝ի բնաւս կարկառես զձեռն քո՝ի կանգնումն ամենեցուն։ Բաշխես զմարմին քո՝ի Ճաշակս սովաբեկաց, և հեղուս զարիւնդ՝ի մաքրութիւն մեղապարտեալ անձանց։ Ականջք քո՝ի վերայ շրթանց ամենայն կենդանեաց, և արդարութիւն քո լսէ զհառաչս սրտի հեծութեան հանրական եղեղութեանս։ Եւ յաղագս անպատմելի և անՃառ սիրոյ քո առ որդիս մարդկան՝ այժմ ևս բազկատարած՝ի վերայ ամենայն խաչի հեղուսեալ բևեռօք անմեկնելի կաս առաջի ահաւորութեան առաքչին քո յաշխարհս։ Վասն պարտեաց մերոց բացեր զկող հրահոսան աղբերդ, և Ճաշակ լեղւոյն և քացախին էական լուսոյդ հուպ՝ի շրթունս Ճառի։ և պարանոց ամենազօր տէրութեանդ խոնարհեալ առաջի անզընեալի հարազատական ծնողիդ և էակից Հոգւոյդ տրտօսրագոչ հառաչմամբ ընդ մեր մեղաւորացս խորհրդաբար աղաղակես զելիսելին։ Եւ

անառակ որդեացս իսկ եղեալ բե-
ման ասեա՝ հայր մեղայ յերկինս և
առաջի քո. զի 'ի ձեռն ասասուածայ-
ին ներգործութեանդ 'ի հաշտու-
թիւն մեզ դարձցի հայրական տես-
չութիւնն, և դառնացեալ կեանք
մեր զկենացն յաւիտենից առցեն
դատակնիք: Եւ որ այդչափ անքըն-
նելի և անիմանալի սէր քո զօրա-
ցեալ եղև յազգս որդւոց մարդկան,
մի միայն փակեր ինձ զընդարձակ
դուռն բարերարութեանդ, և 'ի կը-
շիռս արդարութեան քո արկաներ
զզազբալի կենաց իմոց զպարտս չա-
րեաց, որ թողեր զտոկոսիս բիւր
տաղանդաց բազմաց ըստ իւրաքան-
չիւր մասին. և զմեռասան ժամու
մշակացն զվարձն լիով առատարե-
ցեր ըստ քում մեծութեանդ. և զեօ-
թանասնեկին եօթեանց յանցանս ոչ
յիշեցեր որք հայցեցին 'ի քէն. և
զտապարն յանպտուղ թզենւոյն ար-
գելեր՝ բարեգութ երկայնամիտ լեալ՝
ճնալով պտղոյ: Ոչ հնձեցեր զորոմն
ապականիչ սակս հասկոյ ցորենոյն
որ 'ի մէջ անբաւից, զի մի խլեսցէ

ցորեանն ընդ նմին։ Գրեցեր պա-
տարագ մեծ զխերևէշս այրոյն, և
զկաթուածս արտասուաց կնոջն մե-
ղաւորի համարեցար իբրև զհոսանս
անձրևաց։ Զբարբառ աւազակին
երկնաբարձր ապաշխարութի և ըզ-
հառաչումն անառակին ընկալար
բարձրագոյն քան զհրեղինաց փա-
ռաբանութիւնն. զի ոչ գոյ կշիռ և
չափ ողորմութեան և սիրոյ քո. որ
և յաստուածութիւնդ քո ոչ խնայ-
ես, այլ ճշմարտապէս 'ի գինս միոյ
մեղաւորի յամենայն ժամ ասա ըզ-
քեզ 'ի սպանդ մահու. և դու նոյն
ինքն Աստուածդ ես, և ամք քո ոչ
անցանէ, և այլայլութիւն 'ի քեզ
ոչ գոյ, և քեզ և Հօր քում ամենա-
կալի և սուրբ Հոգւոյդ փառք և եր-
կրպագութիւն և գոհութիւն այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Ե

Յիսուս Քրիստոս Աստուած մեր փրկիչ աշխարհի, որ բարձրացար վան պարտեաց մերոց 'ի վերայ խաչին, և տարածեցեր զաստուածային բազուկս քո 'ի վերայ նորա 'ի սակս մեղաւորացս, որ պատարագեցար ընդ ամենեցուն եղնդ պարարակ և ուրախ արարեր զերկնային բնութիս ընդ այնոսիկ որ 'ի տարր վատնեցին զմեծութիւն կապուտից երրազդեայ միութեանցդ յերամս խոզից: Եւ յառաջին Ճոխութին ածեալ կացուցեր ամենայն զարդուք զզազրացեալս մեղաք՝ քո Ճշմարիտ մարդեղութեդ: Արդ յիշեա յիշեա անհասանելի բնութիւն Հօր, զայնքան խորհրդածութիւն անքննելի խորոցդ, և մի հերքեր զիս 'ի սպառ 'ի հօտէ քումմէ. այլ հնարաւորեա փրկիլ եղկելոյս յահագին աւուրն յանՃառելի դատաստանաց քոց: Վան սիրոյ ծնողին քո խակուհւոյդ երկնից և զորութեան զենարանի հրակէզ սե-

զանոյդ արիւնաներկ սուսերիդ յո-
րում մածար միածինդ Հօր, և վան
գրկակցութեամբ դէրագոյնդ ընդ ան-
հաս էութեան առաքչին քո և ներ-
գործոցն քո Հոգւոյդ ողորմեա գա-
հավիժեալ դերեալս, և անցո ըզ-
սատան պատուհասի հրափորձական
աւուրն 'ի վերայ իմ: Մի ընկենուր
զիս 'ի բիւրակնքեալ անսահման խո-
րութեան անյիշելի յաւիտենական
անհուն վհին, և մի մատներ յարա-
կէզ տոչորման տապակաց անդընդ-
դային թանձրամած խաւարին: Մի
բանար ընդդէմ իմ զաշխարհակուլ
գբերան գեհենին, և մի յանյագ ո-
րովայն հնացեալ օձիցն պարաւան-
դեր զիս բոցեղէն կապանօքն: Մի
բարձրացուցաներ 'ի վերայ իմ ըզ-
գաւազան բարկութեան քո, և մի
շարժեր զսուր հրեղինացն յանրա-
պատ պարանոց իմ: Մի յորձանս
անեզրական բորբոքեալ ծովուն խո-
րացելոյ ծածկեր զչարացեալս չա-
րեօք, և մի 'ի բովս հրահոսան
հրդեհել զնիւթս եղկելի կիզուլա-
կան կայծականց: Մի 'ի քուրայս

անիմանալի հրահալոցացն փորձեր զփրկեալս արեամբ քո, և մի արկաներ 'ի վերայ իմ զկարծրութիւն խստութեան այնմ մթագին որ կիզիչն է հրոյ բնութեան: Մի հաներ զիս 'ի մեռաղս ապականութեան արտաքին խաւարին, և մի փակեր 'ի ներքոյ անդնդային հաստատութեանն 'ի գուբան դառնատեսիլս, ուստի հրեղէն որդանցն երամքն հոսին և աշխարհակլիս ծանրութիւն, ուր ախեալ դրոշնքն կնքին: Մի տար տեսանել ինձ զահագնակերպ կերպարանն այն՝ որ բիւրակերպ տեսիլք անքննելի տանջանացն յաւիտենից 'ի նմա նկարագրեալ տեսանի, և մի 'ի մասն վիճակի հրաւիրելոցն 'ի նոսա դրեր զիս: Մի յերամս ահեկացն կացուցաներ զիս, փրկիչ, և մի հրեղէն կապանօքն տարագրեր արտաքս քան զայցելութեան քո սահման: Մի հերքեր յարտաքին խաւարին խորան զեղկելի անձն իմ, և մի փակեր 'ի վիհան յայն որ անհաս 'ի մարմնաւորաց մնացս մնայ, և սոսկալի ևս հրեղինացն իմանի: Մի յիշեր զիս 'ի

հանդէս կորուսելոցն ահեկանացն, և մի անպատրաստիս բնաւին փա-
կեր զառաքաստ հարսնարանիդ կե-
նաց։ Մի տար ճարակ հրոյն յաւի-
տենից, և մի արծարծեր զդաւնու-
թիւն գեհենին իմով անդնդահոծ
շարաւոմբ։ Մի 'ի տապակս անե-
րևոյթս խորացեալս սանդարամե-
տականս բարկութիւն հոսման տո-
չորեր զարժանատանջ անձն եղկե-
լոյս։ Մի զժայթքումն չարահոտ մե-
ղացս տարածաներ 'ի տեսիլս ամե-
նայն մեղեաց։ Մի զկայծակունս
բարկութեան հոսման հրեղինաց թո-
րացուցաներ 'ի վերայ հրաբորբոք
մարմնոյս, և մի զշանթս յորդաստա-
րափ փայլատակմանց տոչորման ան-
շէջ արփոյն շեղջակուտեր զանձամբ
մեղաւորիս։ Մի 'ի բովս բորբոքեալ
ժանեաց հրաթոյն օձիցն ընկենուր
զիս տեր իմ Յիսուս։ Մի բանար ընդ-
դէմ իմ զբերան հնացեալ վսերայ-
ին վիրադին զոր ոչ բաւէ ընուլ ո-
լորտք արարածոցս։ Մի բերեր 'ի
հանդէս առաջի ահաւոր բեմիդ զա-
հագնալուր հոսումն հեղեղաց չա-

ելիս, և մի տաղտկացուցաներ զահա-
ւոր տեսարան հրաւիրելոցն 'ի սե-
ղան քո սուրբ։ Մի հրապարակեր
զծածուկս անօրէնութեան իմոյ ա-
ռաջի ամենատես հրապարակիդ, և
մի զաստուածային բարբառդ 'ի դառ-
նութիւն կորստական տանջանաց 'ի
լսելիս իմ հասուցաներ։ Մի անտե-
սել կացուցաներ զիս յահեղահրաշ
փայլատակման փառաց քոց, և մի
զրկեր զիս յերանական ձայնէ հա-
մախմբելոցն ընդ առաջ քո տէր։ Զի
թէպէտ և անարժան եմ ըստ գոր-
ծոց իմոց, անբաւ և դառնատեսիլ և
անօրինակելի տանջանաց քան զյա-
ւիտենից եղելոցն 'ի քէն, այլ յան-
զրաւ գթութիւնդ և յողորմութիւդ
եմ ապաւինեալ որ 'ի վերս է քան
զկարծիս ամենայն հոգւոյ։ և բուռն
հարկանեմ զայդքան նախախնամու-
թենէդ, որ դեռ ևս 'ի վերայ ամե-
նայն խաչի հեղուսեալ բևեռօք և
վիրաւորեալ անդամօք խորհրդա-
բար կաս առաջի աներևոյթ զօրու-
թեան Աստուծոյ քո Հօր, և պա-
տարագիս անծախաբար յընդհա-

նուրա ամենայն, զի զանընմբեռելի
ոանչանան պատուհասից քոյով աս-
տուածացեալ մարմնովդ բարձեր, և
բառնաս միշտ և յաւիտեան, միջնորդ
և բարեխօս երամի մեղաւորաց կա-
լով առ Հօր քո օրհնելոյ: Եւ դու
նոյն ինքն Աստուածդ ես, սահման
գթութեան և ողորմութեան, և ոչ
փոփոխին միտք քո 'ի բարեացն
թեւարկութենէ, և անթարթելի ակ-
նարկութիւն նկատես յայնոսիկ որք
հաւատով հային 'ի քեզ. և ոչ պահես
ոխս յաւիտեան և ոչ յիշես զյան-
ցանս դարձողացն առ քեզ: Որ զսեւա-
ցեալ հնացեալ զձանձախարիթ չա-
րեացն որակութեամբ շրջես 'ի ձեան
սպիտակութիւն, և զներկեալս արիւն-
ըռուշտ մեղօք ըստ կարմրութեան
որդան արեգակնափայլ ջահաւորես:
Որ զվէմս աղբերացուցանես, և ըզ-
բացեալ բերանս աշխարհակուլ ծո-
վու սանձես աւազով, զի ամենա-
կալ խմաստութեան քո ոչ գոյ բաւ:

Վասն որոյ աղաչեմ զահաւոր և
զամենակար զօրութիւն անեղիդ, դարձ
'ի յիս 'ի բիւրաթիւ կործանեալս,

յանհուն և յանբաւ խորխորատ անկեալս, յանկանգնելի գլորեալս, յանհատատատ սասանեալս, յանբժշկելի խորտակեալս, յանյուսալի տհաբեկեալս, յանդառնալի վարատեալս, յանսահման չարալլկեալս, յանվախճար սպացեալս. զոր քո միայն է սփոփել, բժշկել և վախճարել։ Որ զասատուածութիւնդ քո ոչ շատ համարեցար սպեղանիս վերացն Ադամայ արկանել, հայեա յիս այնմ գթութեամբն՝ ձեռն կարկառել ըստ այնմ բարերարութեանն. մերձեցիր 'ի խնդրուածս իմ ըստ քում պարգևատուր շնորհիդ։ Ողորմեա անկելոյս 'ի ձեռս աւազակացն. այցելուլեր մոլորելոյս, մերկիս և սովաբեկիս. թող ինձ զպարտիս տալանդացն պահեատի, թագաւոր երկնաւոր. վասն զի 'ի յամենեգ քո յանսասրը աշխարհն՝ արբի զբաժակն դառնութեան մահաբեր կենցաղոյս և թրմբլալից քնոյ դառնութեան, ննջեցի անզգայաբար և 'ի քուն մահի, և ոչ ունիմ սուղ ինչ ասկս անտեսութեանն հատուցանել։ Վասն զի ան-

պատրաստ եղեալ՝ ի տան գանձարա-
նի քո՝ աւար առին գողք և աւա-
զակք զմիթերեալ կապուտն. և՝ ի
վերայ այսր ամենայնի մխեցին զձեռս
իմ յարիւն ծառայակցացն իմոց, զո-
րոց՝ ի ապաս պաշտման կացուցեր, և
ոչ զարհուրեցայ՝ ի պատուիրանաց
բարձրելոյդ։ Թողեր ինձ զպարտս
հինգ հարիւր դենարին, և ես սակս
խերևէշի միոյ խեղդ արկեալ՝ ի պար-
տապանաց իմոց պահանջէի։ Զյան-
ցանս եօթանասնեկին եօթանցն բիւր
անդամ չնորհեցեր ինձ օր ըստ օրէ,
և ես՝ ի վերայ մեղաւորաց ոչ ան-
խայէի, այլ տոյժս տոկոսեաց ար-
կանէի։ Եւ ուր ինձ երկարաձիգ
ամս բարուութեամբ՝ պատրաստել Հանա-
պարհ գալստեան քո և օթեվան տա-
ղամօտեալ հինաւուրցդ գտանել, և
ես՝ ի նիրհման անցուցի զամենայն.
եհաս ժամանակ՝ և զարքայութիւնն
սուրբք ըմբռնեցին։ Յորժամ եղև
բարբառ եթէ ահա գայ փեսայ, ես
դեռ ևս թմրեալ՝ ի մահիճս ոչ ընդ-
ոստեայ։ Մտին յառագաստ հարսնա-
ռանին որ զլապտերս իւրեանց ար-

ծարծեցին արթնութեամբ, և փա-
կեալ ախեալ կնքեցան դրունք, և
հատաւ վիհն յաւիտենական ընդ
մէջ իմ և աշխարհին կենաց: Վասն
որոյ ոչ ունիմ պատասխանատուու-
թիւն առ քեզ. զի ինձէն գանձեցի
զդառնութիւն տարտարոսին և ըզ-
կայծակունս հրոյ գեհենոյն, և կար-
կեալ է բերան իմ յահաւոր բեմոյդ:
Գային զգանձդ կենաց յորում սպա-
սէին, հասին աւետեացն որում ըղ-
ձային, տեսին զայն աշխարհն որ
ամենայն տիեզերք զակնարկումն
միայն ոչ արժէ: Առին զայդ պար-
գևդ զոր երկինք ոչ տանէին. զգե-
ցան զփառս լուսոյ որ ամենայն յա-
ւիտենից Հառագայթք առաջի նշուլի
միոյ նորա իբրև զխաւար համարեալ
է: Եռուր նոցա զիմաստութիւնդ
Հօր և Հոգւոյդ և խորհրդակից ա-
նեղ Երրորդութեանդ. եղեն ծած-
կեալ ընդ ամենազօր աջովդ անզրաւ
փառաւք 'ի մշանջենաւոր և յանկա-
տարած յաւիտենից յաւիտեանս:
Յայնմ աւուր ահեղ և սոսկալի ան-
երեկ յորժամ այս ամենայն կար-

գի, ակնարկեա յիս ողորմութեամբ
քո, անձառ ամենողորմ Աստուած,
և մի տարածեր զցասումն բարկու-
թեան քո 'ի վերայ իմ ըստ անա-
ռակ գործոց իմոց։ Այլ ըստ քումդ
անչափ անհաս անոպատում բարե-
բարութեանդ անտես արա 'ի մոտց
և 'ի գիտութենէ քումմէ զաշխարհ-
հակչիս ալիք յանցանաց իմոց, ան-
քննելի և ամենազօր Աստուած։

Լուր ինձ բազմամեղիս, քո էի և
գերի վարեցայ 'ի թշնամոյն, և պատ-
կեցաւ նա իմով կորստեամբս և խը-
րոխտացաւ իմով աղքատութեամբս.
և դու կարող ես, և ակարանայ 'ի
քէն և ոչ ինչ։ Որպէս նա ծծեաց
զարիւն իմ, և յափշտակութիւն մեծ
համարեցաւ զօգտելն իմ 'ի քէն, այլ
դու մի անտես առներ, մարդասէր,
և մի տար խրոխտանալ անօրինին 'ի
վերայ իմ։ Կողոպտեա, կարողդ յա-
մենայնի, զփառս նորա մեծութեն.
ցրուեա զխորհուրդս նորա. մերկեա
զծածկոյթ անձին նորա. առ զա-
ւարս նորա. ժառանգեա զստա-
ցուածս նորա. աւար առ զապրս-

տամբեալոյն 'ի քէն. տիրեա տանս բնակութեան նորա. առ զերկնաբարձր աշտարակս ապարանի նորա. ընկճեա և կողոպտեա զնա յամենայնի: Ճողոպրեա և քարշեա զալիս նորա խմով փրկագործութեամբս: Արդ տուր ձեռն բարերար դիմելոյս առ քեզ, և արդեալ զաներևոյթ խոցոտումն նեռոյ նորա յոգւոյ իմմէ, և մի տար 'ի ձեռս չարահնարին. զի մի ոան հարցէ ընդդէմ քո և 'ի սպառ կորուսցէ զիս: Արդ խզեա զՔիլս նորա, բարերար, իմով գթութեամբս. Ջախջախեա զսրունս նորա իմով ողորմութեամբս. հատ զոտս նորա իմով բարերարութեամբս. զի թէ ստուգութիւն քո դարձցի յիս, և ձեռն քո մերձեսցի, և աջ քո ընկալցի զիս, և ողորմութեան և թողութեան մեղայ արժանացուսցես զիս, պատառեալ է որովայն չարին և ցրուեալ է ոսկերք գլխոյն:

Եւ արդ տէր Աստուած, թէպէտ և անարժան եմ պարգևաց քոց, և հատեալ եմ ես ինձէն զյոյս փրկութեան իմոյ 'ի քէն, զի թէ ամենայն

հանդէսք վերնոցն ողբան՝ չէ բաւա-
կան իմոյ կորստեանս. զի լոյս
խաւար եղէ, թագաւորս յաղք և 'ի
սիրմ անկայ, և զօրավարս տկարա-
ցեալ գտայ, իշխանս ահարկու նը-
կուն եղէ, աղաստս ըմբռնեցայ 'ի չար
ծառայութիւն, տէրս ամենայն կեն-
դանեաց 'ի կորուստ վարեալ և հայս
կենաց սովաբեկ եղեալ. աղբերս ան-
մահութեան պասքեալ, և արեգակնս
մեծապայծառ նսեմացեալ, քաղաքս
հրապարկապ անմահ արքայիդ աւա-
րեալ, և ապարանս երկնաբարձր
կամարօք յօրինեալ՝ կործանեալ,
ցանկալիս երկնաւորացն ապակա-
նեալ, և դրախտս վայելչասաղարթ
տնկոյդ ապառաժեալ, և տաճարս
լուսոյ փառաց էիդ լուցեալ. սե-
ղանս ամենալի սպառեալ, և զարդ
փառաց արփիահրաշ պանծալին մեր-
կացեալ. պարանոցս բարձրադի-
տակ խոնարհեալ, և պատկեր դի-
մացս հրաշագեղ եղծեալ. աչք ա-
րեգակնափայլ խաւարեալ, և լսե-
լիքս արագալուր խցեալ. լեզուս ըն-
թադրական ապաշնորհ եղեալ, և

բերանս արագացեալ կայ կարկա-
փացեալ. ձեռքս ամենազօր ապիկա-
րեալ, և ոտք երագահաս տախտապա-
րեալ. հանճարս հրաշալի արտատրո-
հեալ, և միտքս երկնաթռիչ'ի ստոր
ինչեալ. զօրութիւն երկնաբարձ ու-
սոյ թիկանցս կոճռոպեալ, և սիրտս
ներհակօք չարին ծորեալ. ջահս ան-
աղօտ շինչեալ, և աշտանակս եօթ-
նարփի շնորհացն մանրեալ. դրունք
տեսականին փակեալ, և սիւնք հաս-
տատութեան մտացս դղրդեալ. վէմք
անկեան հիմանցն խախտեալ, և պըշ-
րակք ձեղուան տախտակացս հոլ-
մովք հոսեալ, ամենայնիւ գօսա-
ցեալ, յամենայն բարեաց արկուա-
ծից հրտոչոր եղեալ. յանմահական
յայգեւոյն եղեալ, և'ի կենաց դրախ-
տէն զրկեալ. 'ի միաբանութենէ
սրբոցն որոշեալ, և'ի փառաց միածնին
մերկացեալ. յանհպելի յաթոռոցն
յանդունդս ինչեալ, և 'ի գերա-
դոյական պետութենէդ 'ի գերու-
թիւն վարեալ: Յանձառ զարդու
փառաց ահաւորիդ մերկ և ծանակ
եղէ, և 'ի գրկակցութենէ Երրոր-

դուլթեանդ անկայ կամաւ 'ի ժանիս հնացեալ օձին։

Արդ ո՞ր ողբք և ո՞ր աղէտ բառնան զայսպիսի կորուստ, զոր ոչ արտօսր էիցս փարատէ զցաւս սրտի իմոյ։ բայց թէ բարբառդ ահեղ և արտօսր աչացդ ահաւորիդ, որ արձակեցեր 'ի գերեզմանն Ղազարու, ժամանեսցէ 'ի խնդիր կորուսելոյս։ Եւ ցայտեսցի յիս յարենէդ այդ որ հոսեցաւ յաստուածային կողէցդ։ կամ թէ հասցէ 'ի լսելիս իմ շնորհք շրթանց ամենահզօրիդ որ հասաւ առ պոռնիկն, և կարկառեսցի մատն անեղիդ որ հպեցաւ առ բորոան։ Եթէ եկեսցէ ողորմութեան ձեռնդ այդ յիս որ մերձեցաւ յաչս կուրին, և հնչեսցէ ձայնդ երանական առ եղկելիս զոր լուաւ աւազակն, ապա բառնի ամենայն անյուսութիւն կարծիք, և կանգնի գլորեալ անձն իմ 'ի խորոց։ Զի թէպէտ և անարժան եմ եղկելիս այդմ ողորմութեան, և մեծ յանդգնութիւն է ինձ ասել զայս առաջի քո, սակայն անսահմանելի է քո աստուածային զօրու-

թիւնդ. զի կամելն քո՝ անդունդք երկինք են և երկիրս երկնից երկինք. խաւարն լոյս, և մէգն լերև զՃառագայթս արեգական։ Արդ մարդասէր փրկիչ, այդ զօրութեամբդ մերձեցիր յիս, և ընդգրկեա զսպականեալ կործանեալ ստեղծուածս քո՝ վերստին ստեղծագործեա, և 'ի մահն և 'ի ժառանգութիւն քո գրեա, և արժանի արա շնորհին այն որով ողորմութիւն դարից 'ի քէն, և մաքրեացին ամենայն մեղք և յիշատակք անօրէնութեան իմոյ. և յերանական վիճակ առաջին բարութեանցն հասից, և ուրախ եղէց յԱստուած փրկիչդ իմ, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։ Տուր ինձ զեղջ անբաւ և արտօսր բազում որ բաւականասցի ինձ ընձեռել զշնորհս աւազանին. քաղցրացո ինձ զչարչարանս սիրոյ քո, և արեամբ անառակիս լուա զորդնալն վերս մարմնոյ իմոյ. քանզի դիւրին և հնարաւոր է քեզ յոյժ, անմահ և անմահից Թագաւոր։

Յիշեա բարերար, զի մարմին էի

երբեմն 'ի մարմնոյ քո և անդամ
յանդամոց քոց՝ այդ որ առեր 'ի
սուրբ կուսէն՝ զփառս շնորհի քո
ափածեալ յարգանդէ աւազանին և
յորդեգրութեանդ եղեալ վիճակ.
ընդ որս մախացեալ խարդաւանող
վիշապն՝ գողացեալ կորզեաց 'ի քէն
զքո նկարագրեալ պատկերս, և
զարդ զանձամբ իւրով արկեալ զնմ
զանմաքրութիւնս, յանդիման ահա-
ւոր և սոսկալի տէրութեանդ՝ հըր-
ճուի քո աստուածային գնոյս ա-
րեամբ. և դու լռեա և անսաս, և ըզ-
դուեթ հայրախնամ տեսչութեանդ
արգելուս՝ այդ որ սիրեցեր մեռանել
'ի վերայ միոյ մեղաւորի: Զի թէ-
պէտ և բազում են անդունդք անօ-
րէնութեան իմոյ, այլ անբաւ և ան-
սահման են անդունդք բարերարու-
թեան քո. և ոչ կարէ անդունդք խա-
ւարի կալ առաջի հրակէզ բոցածախ
անդնդոցդ, որ հալեալ հրդեհէ զար-
ձանացեալ մթութիւն միդի մեղա-
պարտ ոգւոյս որ կարկառեն զձեռս
իւրեանց առ երկնաւոր նաւապետդ:
Եւ այժմ կլեալ զիս կէսն յաւի-

տենից և կամի թագուցանել զիս յա-
մենատես աչացդ, և առաջի այդմ
ահաւորութեանդ հանապազօր հըր-
ձիդ արարեալ կեղեքեալ դիշատեալ
աներևոյթ հրամուխ նեռիւք խոցո-
տեալ և անյոյս անմահ մահուն մա-
հացուցեալ իբրև զանգին և զանայ-
ցելու գերի ունի կապեալ յանըմբե-
ռելի կապանս իւր։ Եւ դու նոյն Աստ-
ուածն ես բարերար և անճառելի,
որ վասն յանցանաց մեր իջեր 'ի
տարտարոսն զօրութեամբ քո, և
բացան ահիւ մեծաւ ընդդէմ քո
դրունք մահու, և բռնութիւնք դը-
ժոխոց փչրեցան, և յաւիտենից բան-
տեալքն ազատեցան, և քրէական
մեռեալքն հրդեհեցան յարփիահրաշ
փառաց քոց։ և աւար առեալ քո
զամենայն կապեալսն զոր վտարեալ
յափշտակեալ էր 'ի գանձարանէ
քումմէ, և հաներ 'ի բարձրութիւնս
երկնից։ Եւ ես մի եմ յերամէ այնր
հանդիսիցն անբաւութեանց։ արդ
ընդէր թողուս զիս տէր՝ տէր իմ 'ի
ձեռս նորա, կամ զիաբրդ փոփոխի
բնութիւն մշտաբուն բարւոյդ սակս

ենոսի անձին իմոյ դառնութեան։
Արա առ իս հրաշս հրաշից. հան
զիս յառաջին ճոխութիւնն, և դարձո
'ի վիճակ կենաց աշխարհին, և ըզ-
շնորհն մերկացեալ զգեցո, և զոր-
դեգրութեանն պարգևս մի արգե-
լուր, զի կարող ես յամենայնի, տէր
բարերար։ Բաւական համարեա ինձ
բիւրս բիւրուց գեհենն՝ զայս որ ար-
տաքոյ առադաստի քո մնացի, և յե-
րանական ձայնէ վիճայիդ զրկեցայ,
և ընդ բաղմելոցն ընդ քեզ որոշեալ
գտայ, և զանճառ զանքնին զանսահ-
մանն զանեզրական հրճուումն հարս-
նարանիդ քո ոչ տեսի, և յանզրաւ
սեղանոյդ՝ զոր Երրորդութիւնդ յօ-
րինեաց քոց հրաւիրելոցդ՝ պաս-
քեալ մնացի, և յանկատուտ գան-
ձուց խորոց ատուածութեանդ ան-
մանն եղէ, և ընաւին իսկ 'ի փառաց
ատուածութեդ պատուոյ 'ի խորս
խորոց խաւարի 'ի կապանս անրմբե-
ռելիս անկայ, և փոխանակ ամենայն
ուրախութեանց վերնոցն ամենայն
սատից պատուհասից հանդիպեցայ
վասն ոչինչ և զազրալի տրմատարած

և առօրեայ չարի նանրական կենցաղոյս :

Եւ արդ Տէր բարերար, չեմ արժանի հայել իսկ յերկինս, կամ յիշել զանուն քո սուրբ, և կամ 'ի միտս իմ նկատել զփառս հանդիսի սրբոց քոց յորոյ հատեալ կոչոպեալ եղէ. բայց զայս միայն աղաչեմ վասն ահեղ աստուածութեանդ, հնարաւորեա փրկիլ ինձ յանողորմելի տանջանացն, յաննշոյլ խաւարէն, 'ի կիզողական հրոյն, 'ի դառնութենէ տարտարոսին : Եւ իբր շան արտաքսելոյ շնորհեա փչրանս ինձ յողորմութենէ քումմէ յաւիտենից ամենապարտ կորուսելոյս : Դինք եմ սուրբ արեան քո և դաւանող համադոյական սուրբ Երրորդութեանդ. մի թողուր զիս 'ի ձեռաց, և մի 'ի սպառ յաւիտենական կորստեանն մատներ զիս : Եւ առ այս պաղատանս բարեխօս լիցի քեզ տէրութիւն սուրբ Երրորդութեանդ Հօրդ ահաւորի և Որդւոյդ միածնի և ամենասուրբ Հոգւոյդ. որում փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Զ

Աստուած անՀառ լուսոյ լուսաւորեա զխաւարեալ մթացեալ մեղապարտեալ տարակուսեալս, վասն խկուՀՒոյդ երկնից Մարիամայ, որ հարան Երրորդութեանդ սիրեցեր լինել և ալսակողնդ զամենայն սուրբս, վասն կենդանարմատ փայտիդ և վասն քրտանց աշխատութեան առաքելոյդ 'ի քէն 'ի խնդիր մեզ կորուսելոցս. փարատեա 'ի հոգւոյ հիքոյս զՀանրամածեալ հոսանս հեղեցայց չարին: Վասն հանապազօր ղենման էական խկութեան քո սիրեցելոյ որդւոյդ, և փոխանորդութեան արեան դորին ընդ արեան մերոյ 'ի ծածկեալս անծայր ծովու մեղաց՝ զփայլակն շնորՀի ողորմութեանքո ծագեա, և վերացո յանդնդակուլ վՀէ խորոցս որպէս Աստուած բարերար, Հրով Հոգւոյդ կիզեա ըզխռիւ աշխարՀադէզ չարեացս, և կաթուածոյ արեամբ լուսոյ փառացդ լուա զանթիւ վէրս Հոգւոյս:

Զարթո զզօրութիւն քո 'ի կեցու-
ցանել զիս, և բաց զգանձարան մե-
ծի ողորմութեան աստուածութեան
քո, որ հաստատեցեր քո անսուտ
բանիւդ վկայութիւն՝ թէ ողորմած
եմ ես։ Եւ բաց զբերան քո 'ի վերայ
իմ շնորհիւն այն որ ասացեր թէ ե-
ղիցի լոյս. զի ոչ ոք կարէ գալ առ
քեզ, եթէ ոչ ամենազօր ձեռն քո
ձգէ և հանէ 'ի խաւարէ 'ի լոյս. և
չիք հնար ումեք ազատել 'ի բռնա-
ւորէն, եթէ ոչ ճշմարիտ ազատու-
թիւնդ արասցէ ազատ, մանաւանդ
իմ սատակահարուած անձինս՝ որ
ամենայն զբօսանք չարին եկն 'ի վե-
րայ իմ, և ոչ կայ սուր սրեալ նորա
յորմէ ոչ խոցեցայ, և ոչ խորհուրդ
խաւարի յորս ոչ դեգերեցայ, և ա-
մենայն անօրէնութեանց եղէ գտիչ և
գործակից նորին։ Այլ ոչ յուսա-
հատիմ 'ի քէն, բարերար, մինչև ցքէ
շունչ 'ի մարմին իմ. քանզի անյոյս
եղեալ բազումք ընկղմեցան, և 'ի
կատարածի վախճանին 'ի քէն գտին
զփրկութիւն. զի անհնարինք 'ի մարդ-
կանէ հնարաւորք են քո անհնարելի

աստուածային զօրութեանդ և քո անպատմելի գթութեանդ։

Զառաջին անյուսութեան հոգւոյ իմոյ խզեաց, և եբարձ զամենայն կարծիս վհատութեանս, և եւ համբառնալ զկորացեալ գլուխ իմ, և ըստ անառակին առ քեզ արձակեալ ձայն՝ հայր երկնաւոր, մեղայ յերկինս և առաջի քո։ Եւ քան զամենայն որդիս մարդկան առաւել անօրինեցայ։ չեմ արժանի խառնել'ի հօտ քո։ իբր շան արտաքսելոյ շնորհեա փչրանս 'ի սեղանոյ սիրոյդ քոց։ Զարթո զամենազօր աստուածութիւնդ 'ի վերայ մոլորեալ ոչխարիս, և 'ի մեռեալս անյոյս մահու արձակեա զկենարար բարբառ քո, և ծածկեա վասն սուրբ փառաց քոց զխայտառակեալ մերկութիւնս իմ առաջի սոսկալի բեմիդ։ Պատառեա զգիր պարտաւորութեան իմոյ վասն ձեռացն այն որ տարածեցաւ 'ի վերայ խաչին, և մաքրեա զմեղս իմ բազում վասն արեանն այն որ հոսեցաւ 'ի կողէ էակցիդ քո։ Ազատեա զիս յանընդմբերելի պատուհա-

սիցն վասն գթութեան հարազատին
քո, որ վասն մեր հեղուսեալ բևեռեալ մածեաւ 'ի վերայ փայտին կենաց։ Թող զպարտիս բազմապատիկ պարտաւորիս յաղագս բանին քո սատուածային բերանոյդ, որ ասացն Աստուած իմ Աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս։ Մի անմասն և անտեսիլ կացուցաներ զիս 'ի հարանարանէ միածնիդ քո վասն արթուն աչիցն որ ննջեաց, և պարանոցի բարձրելոյն որ խանարհեցաւ 'ի գիրկս քո 'ի վերայ խաչին։ Յարո զիս 'ի յաւիտենից մահուանէս։ Վասն զօրութեան և իմաստութեան քո որ մեռաւ ՀԸՇմարտապէս սակս նորոգման յաւիտենից մեռելոցս, հզօր արա զանուն քո սուրբ վասն իմ յերկինս և յերկրի, և 'ի մէջ երեքսրբենից։ և որպէս է հնարաւորեա հայր սուրբ հասանել ինձ մասն վիճակի սրբոց քոց։ քաղցրացո 'ի վերայ իմ զամենայն չարչարանս վասն անուանդ քում սրբոյ։ Տուր ինձ արտօսր բազում և զեղջ անբաւ և դարձ յուսոյ, և զնորհս ողորմութեան քո

Հառագայթեա՛ ի նսեմացեալ սիրտս իմ, զի կարացից կալ՝ ի պատուիրանի քում, և արա զարտասուս և զարիւն իմ լինել ինձ աւազան մկրտութեան բարերարութեամբդ քո։ Փարատեա՛ ի սրտէ իմմէ զմոռածութիւն չարաչար խորհրդոց և գործոց. հերքեա զգիշեր մեղաց մթապատեալ հոգւոյս. բաց զառաւօտ լուսոյ արեգականդ արդարութեան յառագաստի սրտիս, զի մի ննջեցից մինչև՛ ի մահ, և հասցէ՛ ի վերայ իմ անպատրաստ գիշերն վերջին, և զբրկեալ գտանիցիմ յերևմանէ յամեցելոյ փեսայիդ։ Աղաչեմ և պաղատիմ առ քեզ, հայր ամենակալ, և բարեխօս ունիմ զամենայն սուրբս քո զերկնաւորս և զերկրաւորս. այնչափ ողորմեա ինձ, զի ապրեցայց՝ ի հանդերձեալ գատաստանէն պատուհասից, և վերանայցէ ամօթն յաւիտենից, և տեսից զզօրութիւն փառաց քոց՝, և գոից մնան և ողորմութիւն յամենողորմդ. վասն յաւէտ յաւիտենական ողորմութեանն երեքսրբենից փառացդ ողորմեա ինձ,

և անտես արա զյանցանս իմ. և արժանաւորեա յայնմ հանգիսի և շնորհի որ հանէ զիս 'ի հօտ երկնաւոր հօտապետիդ. զի քեզ ամենայն ինչ կարելի է, որ օրհնեալդ ես յաւիտեանս. ամէն :

Է

Ամենասուրբ Երրորդութիւն, անկշռելի սատուածութիւն, համագոյ իսկութիւն, և միահեծան տէրութիւն, արդար և ճշմարիտ ամենայնի, գիտեմ զմեզս իմ զի բազում են, և հայիմ յանօրէնութիւնս իմ զի անթիւք են, այլ ոչ չափի անչափութիւն քո 'ի միտս բանականս, զի կարող ես զբարձունս խոնարհեցուցանել քան զանդունդս, և զանդունդս բարձրացուցանել քան զկամարս վերինս, դարձուցանել զլոյսն 'ի խաւար և զխաւարն 'ի լոյս : Վասն որոյ և ես մեղապարտեալս հոգւով զօրանամ, և զամենայն անյուսութիւն 'ի մտացս 'ի բաց թողում, զի

ոչ կարէ կալ առաջի այդ անբաւու-
թեանդ յանցանք միոյ մեղաւորի,
զի կամքդ բարի և քաղցրութիւն ա-
մենազօրիդ մաքրէ զվէրս խղճայ-
թեալս։ Քանզի ոչ է հնար քո սուրբ
աստուածութեդ դարձուցանել թի-
կունս յայնցանէ որ հային 'ի քեզ
հաւատով։ Եւ ոչ անփոյթ առնես
զայնոսիկ որ կարդան զանուն քո
սուրբ զի յանկանելն 'ի միտս անա-
ռակ որդւոյն՝ ընդ առաջ ելեալ դիրկս
արկեր զպարանոցաւն, զարդարե-
ցեր առաջին պատմուճանաւն, նըս-
տուցեր ընդ աջմէ քումմէ, զեներ
և զեղն պարարակ, զոր ոչ կարեն
բառնալ երկինք և երկիր։ զի ոչ բա-
ւէ ընութիւն քո մերժել զայնոսիկ
որ կամին դիմել առ անյիշաչարու-
թիւն քո գերազանց տէրութեանդ։
զի թէ առաջի լուսոյ ոչ կարէ կալ
խաւար, և ոչ պաղումն ձմերայնոյ
'ի տապ արեգական, ապա ո՞րչափ ևս
առաւել մեղք իմ՝ մթերեալ առաջի
այդմիկ որ լուսոյ և հրոյ ես արարիչ։
Արդ բարձ յինէն բարձրեալ թա-
գաւոր զկարծիս երկմտութեան մը-

տայս մեղսամակարդ, հաստատեա զդղրդեալս 'ի վերայ վիմի հաւատոյ բանիւ քո, բևեռեա զբաժամիտ տա-րամերժեալս 'ի սէր քո և յերկիւղ, առաքեա զշնորհս քո բարի զի առաջ-նորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ: Կա-թեցո 'ի սիրոյ քո 'ի սովացեալ սիրտս և 'ի մեռեալ բնութիւնս զի հրդե-հեալ այրեսցէ զփուշ յանցանացս անբաւ: Մի զազրիր յանառակ գոր-ծոց իմոց, այլ հնարաւորեա բժըշ-կել զապականեալ զազրատեսիլ սղին մեղաց. համեմեա զանհամու-թիւնս իմ աղիւդ Ճշմարտութեան. բաց զդուռն մարդասիրութեան քո և ընկալ զպաղատանս իմ. հայեա ո-ղորմութեամբ 'ի վերայ կործանեալ ստեղծուածոյս քո: Սիրտ սուրբ հաստատեա և հոգի ուղիղ նորոգեա յիս. ամենայնիւ նոր արա, և նորո-գեա հոգւով գիտութեամբ, և մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ, զի 'ի խնամս չարին արձանացեալ եմ 'ի մանկութենէ իմմէ, և ներկեալ արեամբ անդնդային վիշապին, և ոչ տայ թոյլ ամբառնալ զգլուխ իմ, և

հայել յանիմանալի տէրութիւդ. այլ անդրէն զմէգ մռայլութեան չարա հնար դիւթութիւն ի բրև զվարմ որ- ստոլաց ձգէ 'ի վերայ իմ դատապար- տեալ մոացս, և մոռացուցանէ զսէր քո և զահ ահեղ ատենին, և զան- ճառ փառացն պայծառութիւնն, զոր քո սիրելեացն պատրաստես բարու- թիւնս:

Եւ արդ տէր խնամածու և տե- սուչ ամենայն եղելոցս, դու կարող ես յամենայնի, խոնարհեա 'ի խո- րասուզեալ անձն իմ, և ձգեա 'ի բանակեցող սրբութեան հօտի քո, զի ոչ ոք կարէ գալ առ քեզ, եթէ ոչ հայրախնամ տեսչութիւնդ հանէ 'ի խաւարէ 'ի լոյս, և 'ի մահուանէ 'ի կեանս: Արդ մի թողուր զիս 'ի ձեռաց քոց տէր բարերար անյոյս մահուամբ կորնչել, և մի տար բը- նաւին յասպականութիւն չարին զքո ժառանգութիս: Պատառեա զառա- գաստ արձանացեալ սրտիս, խլեա զորոմն չարին. զնշոյլ ծայրագոյն լուսոյ քո ծագեա 'ի ամա, և արմա- տացո զսերմանս արդարութեան քո,

և զքօղ պատրանաց չարին 'ի վերայ
իմ տարածեալ ցրեա : Բաց զաչս
իմ խաւարեալ մտացս որ կուրա-
ցեալ է առ 'ի տես Ճշմարիտ Ճառա-
գայթի փառաց քոց : Տուր լսել ա-
կանջացս անպիտանի զբան հրամա-
նի քո, վասն զի խցեալ է յաստուա-
ծայինսն, և փոյթ 'ի լուր դիւական
բարբանջմանց : Բաց զփակեալ բե-
րանս յօրհնաբանութիւն քո, և շար-
ժեա զշուայտեալ շրթունս 'ի համ-
բոյր սրբութեան : Արձակեա զկապ
կարկեալ լեզուիս խոստովանել առ
քեզ հզօր, և կարդալ զանուն անե-
ղիդ յօգնականութիւն անկելոյս 'ի
ձեռս աւազակաց : Բժշկեա զգօսա-
ցեալ և զփշաբորբոք ձեռս իմ, որ
զքոց անչէջ հրոյն արծարծեցի • զի
թերևս յայսմհետէ մշակեսցէ յայգի
քո : Տուր տէր ընթանալ ոտից իմոց
'ի Ճանապարհս արդարութեան քո,
և բժշկեա զհարուածս չարաթոյն օ-
ձին որ վիրաւորեաց անբժշկելի խոց-
մամբ : Վերացո զքօղ ամօթալի նսե-
մութեան յերեսաց իմոց, և արժա-
նաւորեա հայել ընդդէմ հասարա-

կաց տեսողիդ։ Ամփոփեա զցրուեալ տարածեալ խորհուրդս խաւարին ընթանալ յայսմ հետէ զկնի քո, և սրբեա զմիտս իմ 'ի բազմաթիւ հընարից չարադիւթին և յիշատակէ անօրէնութեանց նորա. քանզի լուծեալ մաշեալ ապականեալ են ամենայն զդայարանք անձին իմոյ 'ի բազմաչար բռնութենէ բանսարկուին։ Քանզի յորժամ յուշ իմ ածեմ և 'ի միտս իմ նկատեմ զնախնի եղելոցն առ իս խորհրդոց գործոց մտածութեանց, կարծեմ թէ ոչ երկինք այնչափ երկնեաց զհոսանս անձրևաց, և ոչ երկիր զբոյս և ըզտունկ, որպէս անբարեսէր միտք իմ զնանրութիւն խորհրդոց և զանօրէնութիւն զազրալիս առաջի ամենատես գիտութեդ. քանզի սարսեցին անասնական բնութիւք 'ի քէն և անխրամատելի զսահման պայմանի իւրեանց պահեցին. իսկ ես առ 'ի միտս անդգամս ոչ նկատեցի խորշել 'ի հրամանէ հզօրիդ։ Ամփոփեալ սարսեաց 'ի քէն էութիւն հրոյ, և խուսափեալ 'ի խշտիս իւր յահեղ հրամա-

նէդ՝ զԹոյնս դառնութենն ոչ կարաց
արտաքս արձակել։ Եւ ես ոչ միայն
ընդ հարկաւորաց չարեաց անկեալ ե-
զայ, այլ և յանդէպս անօրէնութեան
շաղկապեցայ. լռեալ դադարեաց ա-
հագին էութիւն հողմոյ անկայ ունա-
կութեամբն իւրեանց, անպարփա-
կելի՝ի սենեակս իւրոյ սրտին, ան-
շընչացեալ եկաց կարկեալ՝ի յահէ
քումմէ. և զվերամիտ անձն իմ զըս-
տահակեալ և զապստամբ ոչ կարա-
ցին ընկրկել բազուկ քո, և ոչ ա-
հաւորութիւն անհասիդ զարհուրե-
ցուցին զգիւաբնակ քնարս բանասար-
կուին, այլ՝ի գիրկս անեղիդ անձառ
անօրէնութեան եղէ գտիչ։ Ոչ խա-
ւար կարաց կալ առաջի լուսոյ քո,
և ոչ մթութիւն մառախլապատ
թանձրութեանց հակամտեալ հնա-
րեցաւ ընդդէմ հրամանիդ։ Իսկ ես
ոչ գէթ սակաւ ինչ՝ի չարութենէ
մտացս հարկաւորեցայ քեցեալ յե-
ռեսաց քոց։ Ոչ կարաց ահագին
լեռնանման կոհակք ամէհի ծովուն
աշխարհատարած անցանել ընդ ծիր
աւազոյն, և ոչ անդնդային հողմոյն

ուժգնութիւնն կարացին մղել զնա
ընդ եղեալ սահմանս ամենակալիդ։
Իսկ զիս զարձանացեալ զանպտուղ
ապառնիս զգահավիժեալս 'ի բար-
ձանց, զհրասուզեալ վիրադս վսե-
րականս, ոչ կարացին արգելուլ 'ի
գաւիթս քո գերագոյական զօրու-
թիւնքն. այլ արտաքս վազեալ ընդ
ծայրս երկնաբարձր հրեղէն պարս-
պացն զոր հիմնեաց հաստատուն աս-
տուածային աջ հզօրիդ. ընդ պա-
տուէրս օրինաց և մարգարէից, ընդ
կարգս նահապետաց, ընդ ցանկս և
ընդ օրինակս տեսլեան համօրէն սրբ-
բոց, ընդ քարոզութիւն առաքելա-
կանս և ընդ ամենիմաստ տեսչութի
ահարկութեան դիտապետիդ երկ-
նից. ծանեան զքեզ ամենայն գործք
բարձրութեանց և խորութեանց, և
երկիւղալի զարհուրմամբ 'ի քէն կա-
ցին եղական բնութիւնք. և ես միայն
Հողոպրեալ եղէ 'ի ձեռաց ահաւո-
րիդ, և զանզղջանալի հրոյ դեհենին
ատացայ ժառանգութիւն։ Եւ արդ
տէր բարերար, անքնին և անհաս մե-
ծութիւն, ոչ ունիմ արժանք և հա-

մարձակութիւն բնաւին հայել 'ի քեզ, կամ յիշել զահաւոր անուն քո սուրբ, զի այդչափ դիմադարձութեամբ կացեալ, ոչ եմ արժանի հողոյ հաւասարս միանգամ 'ի գազանաց իսկ միանալ յերրամն, թող թէ 'ի բանականի մարդոյ գրիչ: Բայց յորժամ զմտաւ ածեմ զքոյդ նախահրաշ զարմանդ, զօրանայ տկարութիւն վհատեալ հոգւոյս, յաւետաւուր բանիւդ զոր ասացեր ճշմարիտ և աստուածային բերանովդ, թէ ես լոյս յաշխարհ եկի, և որ դայառ իս՝ 'ի խաւար մի գնասցէ, և որ հայցէ գտանէ, և որ բախէ բացցի նմա: Արդ բաց ինձ բարեգութ զանսահման ողորմութեան բացարձակ դրուանդ, աղաչեմ, խնդրեմ և մաղթեմ 'ի քէն անճառ գթութիւն: Մի զանսահման տանջանացն անելեկ աւուրն հատաներ 'ի վերայ իմ դատակնիք, և մի հատուցաներ զպարտիս իմ 'ի լիճ հրոյն: Մի տար կերակուր որդանցն անքուն, և մի մատներ տարտարոսին արտաքին: Մի փառաւորիր յիս տանջանօքն այն

իբրև 'ի Փարաւոնի խորան ծածկու-
թեան, և մի՛ յաղթեսցէ անօրէնու-
թիւնս իմ՛ քոյ ամենազօր և յաղթող
ողորմութեդ։ Որ սպանողացն քոց
լռեցեր, և ուրացողացն ոչ յիշեցեր,
մի՛ և զնմ՛ բիւր չարիս յիշեր, Տէր
Տէր։ զի արժանի եղէց փառաւորել
զքեզ ընդ Հօր և սուրբ Հոգւոյդ
այժմ և միշտ և յաւիտեանս։ ամէն։

Ը.

Եւ արդ տէր բարերար, անոխա-
կալ, հայր գթութեանց, և Աստուած
մխիթարութեանց, տեսող հեծու-
թեանց, և մօտակայ թաղծութեանց,
հայեաց Տէր, ողորմութիւ 'ի պատ-
կեր վշտաց բազմավոտանդ կրիցս կա-
րեաց դաւանութեանս, սակս որոյ
հատեալ է և իմ զանդունդս անյու-
սութեան, և խղեալ զառաստանս էր-
կաթակարծր նեմութեան նախա-
չար օձին։ Կարկառեմ զաչս խմա-
նալի տեսութեանց 'ի խորացեալ
վէհ սանդարամետական իշխանին

յանակնարկելի բարձրութեան երկ-
նաւոր նաւապետիդ : Ակնարկեմ և
ապաւինիմ անապատան կորու-
սեալս յանսահման ողորմութիւն
անձառ սիրոյդ այդ որ նախ քան
զյաւիտեանս նկատէ ամենատես
աչք քո զգաղանիս սրտից մարդկան,
և զանհնարինն եղեալ վիճակ կե-
նաց՝ հնարաւորէր անկանել յուս-
կանս անհասանելի տէրութեանդ :
Ակնարկեմ հառաչմամբ սրտի առ
անբաւ նախախնամութիւնդ այդ, որ
ծանր և անհնարին արարեր քո ա-
հաւոր աստուածութեանդ թիկունս
դարձուցանել յայնցանէ որ կար-
դան առ քեզ. և դիւրին գրեցեր քեզ
զանցանելն երկնից և երկրի, քան
անկանելոյ ումեք 'ի հօտէ քումմէ
յերաման գայլոցն : Գոչեմ գահավի-
ժեալ գերիս առ գերագոյական տէ-
րութիւնդ այդ որ հաճելի եղև քեզ
զփառս Հոխութեանդ փոխանակել
ընդ անկելոյ միոյ 'ի գռեհս չարեաց,
և սիրեցեր զանեղծ և զանստեղծ ան-
մահական էութիւնդ՝ մահացուցա-
նել յաղագս ողմատարած փոշւոյն :

Պաղատիմ առ անպարագրելի խ-
կութիւնդ այդ, որ զպատկառելին
զուրացողն զապստամբն և զհայ-
հոյիչն և զմահացուցիչն քո ընդու-
նիս 'ի դարձարան, և գրգաս լիբ
զհայր կաթողին 'ի վերայ միածնի
իւրոյ: Հառաջեմ առ այդ անսահ-
ման բարիդ, որ ոչ միայն ներես
այնոցիկ, որ հանապազօր միեն
զձեռս իւրեանց 'ի սպանումն էակ-
ցիդ քո, և զպաշտօն ահաւոր աս-
տուածութեանդ ընդ դիւացն մա-
տուցանեն, այլ և զփառս Հոխու-
թեան քո տաս նոցա յակնարկելն և
յանկանելն առ քեզ. զի սահման
աստուածութեանդ կեանք է, և կե-
նագործող մահու. լոյս միշտ և լու-
սաւորիչ խաւարի, 'ի վերբ քան
զամենայն երևելի Աստուած: Զի
դիւրին է լուսոյ գոլ խաւար, և դար-
ձեալ հրոյ 'ի բնութիւն ջրոյ, կամ
'ի բաց դնել բոցոյ զկիզումն, կամ
կենաց մահ անուանել, կամ անկա-
նել 'ի ներհակն գթական տեսու-
թիւնն պարզ և ծանրագոյն բնու-
թիւն անփոփոխ բարուցդ:

Եւ արդ հայր ամենակալ տես ըզ-
քոյ ինքնութիւնդ, քաղցրութեամբ
հայեա քո ողորմութեամբդ 'ի գինս
արեան միածնիդ, և բաց մոլորելոյս
զդուռն քաղցրութեան քո, և ընկալ
զիս որպէս զանառակ որդին, այդ որ
զարմացուցեր զերկնայինսն, և առա-
ւել բարձրացեալ ահաւոր անուն
քո սուրբ վասն կանգնելոյս գլորելոյ
միոյ, և խրախանալ, և զպարարու�
մեծի և սարսափելի եղինն: Եւ արդ
Տէր անոխակալ, յիշեա զայս ամե-
նայն և բաց ինձ զդուռն գթութեդ,
որպէս միածինդ աւազակին. և շնոր-
հեա ինձ վերսին զմուտս դրախ-
տին, զոր վասն անառակ և չարաչար
անօրէնութեան կորուսի. տուր ինձ
վերսին զի կարող ես յամենայնի:
Վասն կենսաբեր չարչարանաց միած-
նիդ քո, և վասն անճառ սիրոյ հոգ-
ւոյդ սրբոյ, վասն երեքսրբենիդ բա-
րեխօսութեան ողորմեա ինձ, և վե-
րացո զամօթն յաւիտենից, և ար-
ժանաւորեա փչանաց սեղանոյ սի-
րողաց քոց, թէպէտ և անարժան
եմ. որ միշտ օրհնեալ ես յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Թ

Յաւիտենից Աստուած հայր հան-
դերձելոյ աշխարհիդ, առաքող միածնիդ յարարածս, և բաշխող ամենասուրբ Հոգւոյդ, որ տկարանայ 'ի քէն և ոչ ինչ, հայեա յիս բարի ակնարկութեամբ, և կարկառեա զարարչատեղծ աջ քո յահաբեկ վհատեալս. բաց 'ի քաղցրութիւն զամենատես ակն քո, զգութ ինքնական սիրոյդ, և զողորմութիւդ անսահման մի արգելուր. այլ ըստ նմանութեան առաքելոյն 'ի քէն, գիտ զկորուսեալս, կանգնեա զկործանեալս, փրկեա զգերեալս, միսիթարեա զյուսահատեալս: Հատ զառատանս վարմի չարին. բժշկեա զամենավէր խայթոցս նորա, և հրդեհեա հոգւով շնորհի քո զձեռագիր պարտաւորութեան պատժապարտիս, լեր քահանայապետ անքակտելիդ քաւութեանմոյ, և հանող հոսեցելոյս յանդունդս: Հանրականաց ստեղծիչ, արկ զիս 'ի գաւիթս երկնաթռիչ ե-

լամիցն, զոր սատացար զօրութիւնդ
ահաւոր։ Հայեաց յիս այնմ ողոր-
մութեամբն, որպէս օծեալն 'ի քէն
առ վերաւորեալսն հոգւով. նկատեա
զխորս խորոց և զխաւարս խաւարի,
որպէս ինքն էակն յէակէդ զմահար-
ձանեալն 'ի սատանայէ։ Զգեա ըզ-
ձեռնդ ամենազօր 'ի մահասատ հա-
լրուածեալս, որպէս արթուն ակն
քո առ ապտակեալն 'ի բանսար-
կուէն։ Կոչեա 'ի հրաւէր հարանա-
լանի միածնիդ քո, որպէս և նա ըզ-
մեղաւորացն երամն. յարո որպէս
համագոյակիցն քո զմեռեալսն. ձայ-
նեա որպէս հրամանն հզօրիդ առ
Ղազար. կալ զդագաղաց մարմնոյս
որ լուծեալն է՝ որպէս փառակիցն քո
զորդի այրւոյն։ Կարդա զանուն վա-
զավախճան վերիս, որպէս և բար-
բառն բիսեալ 'ի բերանոյդ առ տալի-
թայն։ Լուր աղաչանաց չանորդոյս,
որպէս դերաչլական զօրութեանդ 'ի
քէն քանանացւոյն։ Թող զյանցանս
հոսեցելոյս յամենայն մասունս մե-
ղաց, որպէս անառակին. շնորհեա
զմաքրութիւն վերամիտ հիւղոյս,

որպէս կեանքն անմահ 'ի կենաց տուողէդ զանթաղ մեռեալ անդամս անդամալուծին։ Սրբեա զապիս դառնացեալ անձինս, որպէս նկարագիր էութեանդ քո զցաւս տարժանեալս բորոտին։ Զշնորհս կենդանութեան հաստ 'ի հաստեալս 'ի դրուանս մահու, անբաւելիդ քերոբէից, որպէս խակակիցն քո ծառայի հարիւրապետին։ Եւ զծայրատեալ անդամս իմ արծարծեա'ի հաստատութիւն, որպէս բանն քո զձեռն գօսացելոյն։ Դադարեցո զալիս յանցանաց իմոց յաւիտենից Աստուած, որպէս անորակն յանքանակէդ զմրրիկ մթացեալ կոհակաց ծովուն։ Եւ զինչո զբոց հնոցի հրատոչոր հոգւոյս, որպէս հրաշագործեցեր երից մանկանցն 'ի Բաբելոնի։ Կորզեա 'ի ժանեաց հընացեալ օձին զկորացեալ անձն իմ, միանական տէրութիւն, որպէս էութիւն ահաւորիդ զհարուածեալ գերդեսացին 'ի լեգէոնաչար դահճացն։ Խզեա զառասանս մեղսասիրին՝ արկեալ զինև հատանող սուրդ հրակիզիչ, որպէս լոյս ինքնութեան

փառաց անծայր ծայրագունիդ զու-
թուտանամեայ կապեալն 'ի սատա-
նայէ : Բժշկեա զաներևոյթ վէրս հո-
գւոյս ամենազօր և զհոսումն հեղե-
ղաց մտացս անմաքրից ցամաքեցո,
որպէս շնորհք ամենառատ աջոյդ
բարձրելոյ զվիժումն արեան տեռա-
տեսին : Զմթերեալ անօրէնութիս և
զանգունդս մեղաց ծովու գրաւեալ
'ի մարմնիս իմ լոյծ անիմանալի բը-
նութիւն , որպէս անսահման կնիքդ
անսահմանելւոյդ զհամերն և զբը-
գողելոյն արձակեաց զկապ : Զօրհ-
նութիւն սուրբ բերանոյ քո աճեցո
առ իս անեղանելիդ Աստուած , որ-
պէս անմահ բանն քո զգարեղէն
նկանական առ բիւրաւորսն : Եւ
զշնորհս եօթանասնեկին եօթանց
թողութիւն հանապազօր առատացո
առ անբաւ պարտուց իմ քաւու-
թիւն , որպէս էակցին քո հրամա-
նատրեցաւ : Ակնարկեա յանծայր
խորս խաւարիս աննիրհելի ակնդ ա-
մենատես , որպէս միտք մեծիդ առ
սամարուհին . և 'ի խցեալ ականջս
իմ հատ զաւետիս ջրոյն կենդանու-

թեան։ Արտափայլեա յիս 'ի ծայ-
րագոյն բիմանէ շնորհացն որ 'ի շըր-
թանց բերանոյ բանէ հզօրիդ հասաւ
առ պոռնիկն։ Եւ զազատ լոյսդ ա-
ւրեգականդ արդարութեան արկ 'ի
բիբս իմ փայլատակեալ, որպէս
ծնունդ անծնիդ յաչս ծնէ կուրին։
Փայլատակեա զլոյս գիտութեան քո,
բաց զկնիք աներևոյթ խորհրդոյ խո-
րոց գանձարանիդ, ամենակար և ան-
ընդնելի մեծութեան, և զբազմատարած
պատուարս անչըպետական առա-
գաստացն արձանացեալ ընդդէմ իմ,
վերացո առաջի անկրական և անսահ-
ման սիրոյ քո, որպէս աւետաբեր
լրումն անլրարկելոյ։ Եւ հասո յիս
զբարբառ կենդանական լսոտ երա-
նական ձայնին քո որ 'ի խաչին ար-
ձակեաց առ մեղսապարտեալ աւա-
զակն։ Էջ յանդունդս խաւարիս,
անբաւ անդունդք լուսեղէնք, և 'ի
տապէ տարտարոսին փրկեա զտա-
ղտապրեալս 'ի քէն, որպէս միտք և
կամք ահաւորիդ զարարածս քո
'ի յաւիտենից մահուանէն։ Յիշեա
զէական սէր քո սիրաբուխ կամա-

ւորական պատարագին 'ի վերայ աշ-
տարակի խաչին, որ վասն տա-
ղաղրելոցս 'ի քէն տարածեալ ու-
նէր զվիրաւորեալ բազուկս իւր յան-
դիման ահաւոր զօրութեանդ հա-
լոուածասաստ գանիւ՝ յանեղծ յաս-
տուածային երեսս իւր առեալ ըղ-
թուք և զապտակ սեւեռեալ բևե-
ռօք, բացեալ կողիւք, դառնաձա-
շակ եղեալ մահացուցանէր զինքն
վասն մահապարտացս առաջի քո
գթութեանդ. և անձառ նախախնա-
մութեդ կառավարելով զամենայն,
և հանդուրժեաց կամք անեղիդ, և
երկնային և երկրածին բնութիւնք
համբերեալ անըմբերելի հիացմանդ
ահաւորիդ: Արդ վասն անձառ ներ-
գործութեան խորագոյն խորհրդոցդ
և կրից տնօրինական տնտեսութեդ,
հայեաց յիս ողորմութեամբ Հայր
երկնաւոր, և մի տարամերժեր զեղ-
կելն անձն իմ 'ի կրից միածնիդ քո:
Բաց ինձ զծածկեալ դրունս հիա-
պատում խորոց ողորմութեան քո.
կարկառեա զձեռնդ հզօրիդ 'ի խորա-
սուզեալս յանդունդս, և փայլատա-

կեա 'ի նշուլից լուսոյ ծայրագունիդ
'ի կարծր ապառաժ վիմացեալ ան-
մաքուր մարմինս : Եւ մի թողուր 'ի
ձեռացդ ամենամբռնող՝ զկնքեալս մա-
տանեաւ կնքեալ խորհրդոյն քո ,
մինչև հասուցես 'ի բանակ հօտի
նորա , զոր մուծանելոց է 'ի գաւիթս
երկնաւոր հօտապետիդ : Գիտ միայ-
նոյդ միակին ծնողդ զմիայն մոլո-
ռեալս • ազատեա միայն ՀՀմարիտդ
զանապատան գերիս • և զՀՀմարիտ
ազատութեան հրամանն հաստար-
մատ արձանացո առ իս հինաւուրցդ
Ատուած , և ըստ ամենայն տնօ-
րինական սիրոյ առաքելոյն 'ի քէն
որ 'ի յազգս մարդկան ներգործե-
ցաւ : Կառավարեա 'ի վերայ իմ զո-
ղորմութեան քո պարգևս անհասա-
նելիդ Ատուած • շնորհեա ինձ և
փրկեա զիս 'ի կապանաց հնացեալ
բռնաւորին , որպէս միածինդ քո ա-
ռեամբ իւրով զտարամերժեալ տունս
Ադամայ 'ի վերամիտ գոռոզէն : Ել-
կատեա զիսորս այնր սիրոյն մինչ
յարդանդէ աւազանին առեր զիս ,
վասն ահաւոր անուանդ երեքսրբե-

նիդ որ կոչեցաւ 'ի վերայ իմ։ Մի մերժեր զիս յերեսաց քոց. զիմոր կենաց մարմնոյ և արեան որդւոյ քո սիրելւոյ անապական պահեա յապականելի մարմինս իմ. որպէս ըզկայծակունս հրոյ տաճարին 'ի խորս ջուրցն, և արծարծեա մեղսաքաւիչ բոցո

զօրհնութիւն օրհնութեանց բերա-
նոյ քո զանձամբ ամենաթագաւորին։
Մերձեցո զիս յանդամս ահաւորիդ
յորմէ հատեալ եղէ, և վերացո ըզ-
սուր շրջապատեալ քերովբէիցն 'ի
դրանէ անմահական մուխց այգոյն։
Եւ արծարծեա զօրութեամբ քո ըզ-
թեւս հոգւոյս, զի հնար լիցի ընդ
ցանկակատար հրեղէն պարիսպն
անցանել 'ի կեանս սիրողաց քոց։ զի
կարող ես, և շնորհք քո բաւական
է կատարել զամենայն։ Արկ զողոր-
մութիւն սիրոյ քո կամուրջ տիե-
զերատարած խորութեան անհուն
վէին, և անցո զիս ընդ ծովածաւալ
յորձանս հրեղէն գետոցն անբաւից
'ի նկատել զվայրն երկնաւոր նաւա-
պետիդ։ Մի՛ զանց առներ զխայտա-
ռակ մերկութեամբ իմով միշտ ան-
յիշաչար բարիդ։ այլ ձեռն տուր
անկելոյս 'ի ձեռս աւազակաց ըստ
փրկական բանի առաքմանն 'ի քէն։
Պատառեա զձեռագիր իմոյ անբաւ
պարտաւորութեան, որպէս կեանքն
անմահիդ կենացն յաւիտենից զկը-
տակ չանորդեացս 'ի վերայ խաչին։

Մի անտեսել կացուցաներ զկս 'ի հիաչքնաղ հրապարակաց հրաբուն սեռից, և մի բնաւին անմասն առներ զկս յանխմանալի յանտարր աշխարհացն յարփիահրաշութէ և յանճառ փառաց փառաւորելոցն յանսահման յանդունդս անմատոյց լուսոյ աստուածութեան քո. զկր կնիք մեծազօր շնորհաց քոց զանյուսալի անձն իմ յուսողացն 'ի քեզ, այդ որ ինչուցեր զերկինս յերկիր, և երկնից դեր 'ի վերոյ զաշխարհս կացուցեր։ Մի անկար դրեր զանկեալ պարանոց իմ կանգնել 'ի վեր, մի հատաներ վնհ յաւիտենից ընդ իմ և աշխարհիդ կենաց։ Ողորմեա յաւիտենից Աստուած յաւիտենից կորուսելոյս, վասն անօրինական կրից և միջնորդութեան մարմնոյ և արեան միածնիդ, որ ընդ ալմէ քո կայ։ Ողորմեա ինձ ամենողորմ Աստուած, և զվնասակարծր նսեմութիւն անգնդապատոյտ կենցաղոյս ծովացեալ զանձամբ խոով ծայրագոյն և արփիափայլ լուսովդ արփաւորեա ըստ բխման բարեաց հայրաշարժ էութեանդ։

զապառաժ և զծմակացեալ բնու-
թիւնս հրատուզեալ մաքրեա, և ար-
ծարծեա 'ի նորոգումն կենաց գե-
տահոս վտակօք հոսեցելոյ 'ի կենաց
աղբերէն անծայրդ ծովու, և արբո
զպապաքումն ծարաւելոյս 'ի ծորմա-
նէ նշուլից ծայրագոյն լուսոյ քո:

Աստուած անհառ զի միշտ բարի
ես և անմեկնելի է 'ի քէն բարեաց
բերմունք, որպէս ընդ հուր միաւո-
րեալ տապ, և լոյս ընդ բոց, զովա-
ցումն ընդ հողմ, և խոնաւութիւն
ընդ ջուր, միտք ընդ հոգի, և բան
ընդ միտք, տեսակ ընդ գոյն, և գոյն
ընդ համ բերեմ 'ի հանդէս առաջի
քո հայր սուրբ զանհառ...(6) զբե-
ռանն կափուցեալ 'ի վերայ վսերիս:
Հայեաց ամենողորմ Աստուած ո-
ղորմութեամբ 'ի հասեալս յանդունդս,
մինչև ևս են շարժեալ պահապանք
տանս տարօրէնիս: Եւ կարկառեա
զարարչաստեղծ աջ անպարագրելի
էութեդ, մինչև է ընկղմեալ նան-
ռապատիր անիւս 'ի գուբն: Արկ
զնշոյլ շնորհի քո նորոգման խմոր
կենաց մեղսամակարդ մարմնոյս,

մինչև են հասեալ բարեկամքն իւրա-
մատեալ 'ի տար աշխարհէ։ Մի ընկիր
ապառում առ անթոշակ փերևեր-
տեալս մեղոք, մաքրիչդ հրեղինաց,
մինչև է հասեալ համբարեալ հիգոյս
գիշերն ահագին, յորում չիք հնար
զառաւօտն տեսանել։ Զարթո զսա-
լացեալ սիրտ իմ հայել առ հանրա-
կանաց ստեղծիչդ, մինչև ձայնն ա-
հագնալուր արթնացեալ հաւուն
'ի լսելիս անպատրաստիս հասեալ։
Ընկրկեա զիս այժմ արփիափայլ
անկրական զօրութիւն, մինչև են
դահիճքն դաժանք պարապատեալ
զպատժապարտ անձամբս։ Կորզեա
զիս յանրափակեալ դրանէ կորըս-
տեան, կարողդ և ամէնըմբռնող տէր,
մինչև է բացեալ զանյագ որովայն
իւր գիւամրրկեալ դժոխոցն։ Յա-
փըշտակեա մի յապաղեր բոլորեցս
փրկիչ, մինչև է կլեալ կոճոպեալ
կեղտանուն յոգնաջարս յաւիտենա-
կան կիրէն։ Մի նիրհեր զլուսանորոգ
ակնդ նկատող, մինչև են պատեալ
զինև սուրք բոցակէզ հրեղինացն։
Մի անտես առներ բարերար զբաժա-

կիւդ ապերախտս, մինչև են ժամանեալ որոգայթքն և պաշարեալ զեղկելիս։ Ընդունեա զիս հինաւուրցդ անսահման բարձրեալ, մինչև իշխան աշխարհիս զհրաթոյն կապարձս չարութեան իւրոյ բնաւին հեղեալ 'ի վերայ իմ։ Ցանցեա շրջապատական աջովդ քո զհերատեալ հեգս յերրամն քո սուրբ, մինչև է տարածեալ 'ի վերայ իմ անփարատելի մեգն հրատարակի։ Գթա յիս անյիշաչարդ, մինչև ես եմ անկեալ 'ի ձեռս անօրէն և անյագ և անայցելու դահճացն։ Մերձեցիր յիս ողորմութիւդ անքաւ, անքնին էութիւն, մինչև է ժամանակ անողորմութեան հասեալ 'ի վերայ իմ։ Ազատեա յանքաւ պարտեացս ամենառատ, մինչև ես են հարկապահանջքն զտոկոսիս տուժեալ։ Տուր զնշան շնորհի ողորմութեան քո 'ի ձեռս իմ, և շնորհեա զազատութեան կտակն, մինչև է դատաստանն 'ի վերայ իմ հասեալ։ Զդեցո զշնորհս ուրդէգրութեան աւազանին, անկշռելի ներողութիւն, մինչև է տիրեալ հուրն յաւիտենից։

ջնջեա ողորմած, զանեզրական չա-
բեացս մուրհակս, մինչև ևս եղեալ
եմ յանդիման ահաւոր և անաչառ բե-
միդ։ Ժամանեցո առ իս զթողութեան
ձայն քո, միամտական տէրութիւն,
նախ քան զփակել դրանցն, և արա
զողորմութեան լապտերս լուսոյ քո
լքելոյս, մինչև է հասեալ գալըս-
տեան քո օր։ Փրկեա զիս փրկիչդ
աշխարհի վասն փառաց սուրբ ա-
նուանդ քո՝ի հանդերձեալ պատու-
հասիցն, և զերծո զիս յահէ աներեկ
աւուրն և՝ի տագնապէ անըմբերելի
ժամուն, յորում երկինք և երկիր դո-
ղալով իբրև զջուր ծովու ծփայ ա-
ռաջի քո ահեղահրաշ փառացդ։ Ամ-
րացո անբաւելիդ երկնից և երկրի
վահանօք ողորմութեան հոգւոյ քո
զվարանեալ մարմին նժդեհիս, մինչ-
չև ևս են յորձանք հրեղէն գետոցն
հոսեալ՝ի վերայ իմ։ Տուր թեւս կո-
ճոպեալ անդամոցս վերանալ՝ի վեհ-
մազարմիցն երամս, մինչև է ծածկեալ
անչէջ հրոյն երկնաբարձ յոր-
դութեամբն զոլորտս ծագաց երկրի։
Հատ և հեռացո հայրդ հանդերձելոյ

աշխարհիդ զանցուսութիւն վհատեալ մտացս անմաքրից, մինչև է հասեալ ժամն յոր հրեշտակք սարսափմամբ ճեպին։ Նորոգեա զապականեալս, մինչդեռ նորոգիչդ և դեղդ կենաց 'ի միջի ես, և չև ևս են տեղացեալ 'ի վերայ իմ շանթք փայլատականց անկրական հրոյն, և տիրել անմահ մահուն, և գրաւեալ 'ի գոգս իւր անշէջ դեհեանն, և բարբառ բերանոյ, բարկութիւն աստուածային 'ի լուր հասեալ, և արտաքին խաւարին, և անիծիցն ժամանեալ հրաժեշտ, և անյիշելի կորստեանն արձանացեալ կնիք։ Փութացիր փրկիչ, հասիր այժմ 'ի խնդիր կորուսելոյս, մինչև է փակեալ մուտ առագաստին հարանարանիդ կենաց։ Նայեա յիս ողորմութեամբ քո ամենողորմած, վասն անակզբնական անճառ ծննդեան անակզբնատպիդ, և արտափայլմանդ 'ի քէն մշանջենակցի Հոգւոյդ վասն ծագման անքանակիդ յանորակէդ, յոր անկեալ 'ի բնութիս մեր, և բնման միշտ բարւոյ բուսիդ յանբաւելի բնութենէդ։

Բարերարեա առ բազմահարուածս
բարձրեալդ Աստուած վասն հոսման
անկրական զօրութեանդ առ արտա-
կացեալքս, և կնքելոյ անկնքելի խոր-
հրդեանդ։ Վասն երևման շնորհին
քո արարածոց, և միութեան առե-
ցեալ մարմնոյ միաանականիդ քո
յանպարագրելի յէութեանն և ներ-
գործութեան բարերարին որ 'ի քէն,
քաւիչ լեր իմոյ ծանրըմբերելի յան-
ցանացս վասն ամենայն անօրինական
խորհրդեան բանի քո տէր, և անտե-
սութեան կառավարի Հոգւոյդ։ Զա-
մենայն որոմն անօրէնութեան իմոյ
հրդեհեա հերքիչ խաւարի, վասն ա-
հաւոր զօրութեանդ և փառաց ամե-
նակարողիդ։ Եւ ոչ սահմանի, և ոչ
չափի, և ոչ կշռի անքաւ բնութիւն
քո ընդ եղական գոյութիւնս։ և ոչ
'ի խորս էութեան սիրոյ քո հասաւ
ոք բայց 'ի միածնէդ՝ որ և զինքն մա-
հացոյց, և Հոգւոյդ սրբոյ որ ընդ ա-
մենայն խոնարհս զինջանէ։ 'ի ձեռն
որոյ ծանեաք ծածկեալ ծանակեալքս
զանլսարկեալ արտափայլումն սիրոյ
քո 'ի վերայ ընդհանրական եղելու-

թեանս, և նկատեցաք զանհաս մեծութեանդ գերազանութիւն։ Վասն որոյ ամենասուրբ Երրորդութեանդ հօր և Որդւոյ և ամենասուրբ հոգւոյդ փառք և երկրպագութիւն յաւիտեանս։ ամէն։

Ժ

Տէր Աստուած անսկիզբն հզօր և փառաւորեալ, անտես և անպատճառ յամենայնի, անժամանակ և յաւիտեան, արարիչ երևելեաց և աներևութից։ Յիշեա յիշեա անպարիսպանալիդ զաշխարհակեցոյց անօրէնութիւն անտարացոյց անօրինողիդ, և վասն անտանելի խորհրդոյ գերունակիդ գերազանցեա առ գահավիժեալս զձիր պարգևաց ահաւորիդ։ Եւ վասն ծննդեան ծայրագոյն լուսոյդ ազատիչ աշխարհի յամենօրէնեալ կուսէն՝ ընթադրեա 'ի վերամիտս զծագումն ողորմութեանդ անքաւ, և հան 'ի խորացեալ արդանդէ մահու զհրատուզեալ անձն եղկելւոյս։ Եւ վասն անտեղի և խան-

ձարրապատ լինելոյ անտանելի բը-
նութեանդ, 'ի մեռեալ բազմելոյ խոր-
հրդեանդ հօր, զարտաքսեալս 'ի կե-
նաց և զծածկեալս յանդունդս խո-
րոց և զկապեալս 'ի խանձարուրս
չարեաց և զդանեալս սատակվեր
խոցուածովքս արձակեա քո ամե-
նակարող զօրութեամբդ անհասանե-
լիդ Աստուած: Վասն ամենամաքուր
մարմնոյ և հրաշափառագոյն գրկաց
սրբուհւոյն յորում գգուեցար, վասն
աստուածանելոյ շրթանցն որ համ-
բուրեցար, բազմերանեան ձեռացն
որ շոշափեցար, երկնաբարձ բազ-
կացն յորում հանգեար, անպա-
ռիմանալի պարանոցին զորով փա-
րեցար, սուրբ ուսոյն յորում բար-
ձար, արփիաբուխ ստեանցն որով
կերակրեցար, հոգեւունակ գեղոյն
որում ցանկացար, անհամեմատ
մաքրութենն որում հաճեցար, և սի-
րաբուն աննդեանն որով զարգա-
ցար, զթա յիս 'ի բազմամեղս, և
զամենայն թակարդս վարմից չարին
շրջապատեալ զինև խզեա աստուա-
ծային զօրութեամբդ, և զանհամար

պարտեայն պատառեա զմուրհակ։
Վասն ընծայելոյն համագոյիդ Հօր՝ի
տիրական տաճարի փառաց քոց, և
աղօթիւք սուրբ ծերունւոյն բարձ
՝ի յուսոյ իմմէ տարապարտեալ ան-
ձինս զծանրըմբերելի կարծրասատ
լուծ անօրէն իշխանին, այդ որ բար-
ձեր զմեղս աշխարհի։ Վասն անճառ
մաքրութեան միայնոյդ Աստուծոյ
զեղական բնութիւնս, և մկրտու-
թեանն՝ի սուրբ յորդանան յառա-
ջընթաց կարապետէն, և վասն իջման
՝ի վերայ կենարարիդ ամենազօր
սուրբ Հոգւոյդ, և վասն վկայութե
ձայնիդ հայրական, որ զհարազա-
տութիւն քո յայտնէր աշխարհի,
զաշխարհադատ չարալլուկ բազմա-
մեղ եղկելիս մաքրեայտներելի յան-
ցանաց որպէս մարդասէր և զԱ-
ստուած բարերար։ Եւ վասն հան-
դիսի փորձութեան քո՝ի պատրո-
ղէն անպարագիր էին արփոյդ և վասն
հիազօր հրաշիցդ աներևութի գերու-
նական զօրութեանդ, շրջելոյն շնոր-
հացդ անեղին յանօրէն յարկս մեզա-
ւորաց և ակնարկելոյն՝ի լուծ խո-

նարհութեան, որ վասն կորուսեալոց կարեկցաբար կատարեցեր, բժշկեա զվերաւորեալս զզաղրատեսիլ տաղտկացեալ հարուածս անօրինիս։ Եւ վասն սիրոյ աշակերտացքոց զոր ընտրեցեր և հաներ զնոսա 'ի տար աշխարհս, զհերքեալս 'ի կենաց աշխարհէ ընկեա վերատին յուսկանս ողորմութեան քո։ Եւ փոխանակ տառապանացն 'ի ձանձրութիւն աշխարհիս, և կրելոյ կարողիդ զամենայն կիրս մարմնոյ իբրև զմարդ, և անցանելոյ ընդ սուր յաղագս պարտեաց պատկառեցելոյս 'ի շնորհէդ քումմէ, վերացո զամենայն պարտիս չարեաց 'ի մարմնոյ իմմէ, կեցուցիչ բնաւիցս, անմահ և անմահից Թագաւոր, որ օրհնեալ ես յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

ԺԱ

Անեղանելի բնութիւն և բան հօր, անակիզբն և անժամանակդ Աստուած, որ վասն պարտեաց մերոց անպարտականդ պարտաւորեցար, և

ժամանակաց արարիչդ փակեցար
ընդ ժամանակաւ. լոյսդ ծայրագոյն
որ ծրարեցար 'ի խաւարի մարմնոյս,
զօրացո 'ի բնութիւն անտանելւոյդ
զահաւոր ողորմութիւն գթութեան
քո 'ի տակս եղկելւոյս: Եւ վասն դի-
մելոյն անմահիդ 'ի հանդէս մահուն
և հրաշափառ ներգործութեան քո
յընթրիսն խորհրդոյ 'ի սուրբ վեր-
նատունն, լոյծ յանըմբերելի տան-
ջանացն և վերածեա որպէս զԱ-
ստուած բարերար 'ի լոյսդ մշանչե-
նաւոր: Եւ վասն ձաղանացն և ապ-
տակին և թքոյն և հարուածի եղե-
գանն, և բազմաբիւր հայհոյութեանն
զոր ընկալար 'ի դպրացն և 'ի փարի-
սեցւոցն յաղագս տարագրելոյս յա-
նեղաշէն դրախտէն, վերացո 'ի վսե-
րային չանորդոյս զձաղանս մահու և
զամօթ պատկառանաց, զհարուածս
դաժանասաստ, և զապտակ անմահ
մահուն, զոր մթերեցի իմ անառակ
վարուքս: Վասն յատենի կալոյն քո
առաջի պոնտացւոյ Պիղատոսի և
հարցափորձ դատաւորին, և այլա-
նելոյն 'ի Հերովդիսոյ, զահաւոր

գատաստանին զպատիժն անելոյ
աւուրն բարձ լինէին։ Եւ և փո-
խանակ պատառելոյ պատմուճանին
և մերկապարանին լինելոյն՝ զմերկա-
ցեալս 'ի կենաց լուսոյն ծածկեա
ատուածային ողորմութեամբդ։
Վասն փշեղէն պսակին և բառնալոյ
զփայտն մահու 'ի վերայ կենսաբեր
ուսոյդ, և վասն տարածման բազ-
կացդ 'ի վերայ նորա, որով բացաւ
սրովբէական դուռն դրախտին, և
վասն սեռման բեռեռացն և կնքելոյն
քո ընդդէմ աստեղաց, և գիտելոյն
զամենայն հեթանոս, զտարածեալս
'ի վերայ հրահոսան բոցոյ գեհենին,
և զսեռեալս ընդ անմահ մահուն
տանջանաց, և զկնքեալս մնատանեաւ
ջարին՝ կորզեա կարող յամենայնի։
Եւ վասն քացախին և լեղւոյն որ ար-
բեր, և տիգախոց կողին, և հրա-
խառն սուրբ արեանդ և աւանդման
հոգւոյդ, խոնարհման պարանոցիդ
'ի վերայ կենսաբեր խաչին, քաղցրա-
ցո զկամս Հօր քո, և զՀաշակ դառ-
նութեան խմոյ 'ի քաղցրութիւն փո-
խարկեա։ Ցայտեցո 'ի կաթուածէ

սուրբ արեանդ յապառաժեալ հո-
գիս, և պատառեա զգիր պարտուց
անթիւ տաղանդաց, և արձակեա 'ի
մեռեալ հոգիս զբարբառն Ղազարու,
և յերանական ձայնէ աւազակին մի
անման կացուցաներ զիս: Մի որո-
շեր զիս յանդամոց քոց; և մի ար-
տաքոյ այցելութեան քո կացուցա-
ներ զիս ահաւոր և ամենագութ Ա-
տուած: Եւ վասն 'ի կարդ մեռելոյ
անկանիլն, և հզօր թաղմանն, և 'ի
մահիճս ծածկելոյ, և փակելոյ խմա-
նալի վիմիդ վիմով, և կնքելոյ մատա-
նեաւ մարմնեղինի, զկարկառս լեռ-
նատարակի վիմօք 'ի խորս անդնդա-
կուլ վիշապին վերաբերեա կեանքդ
աշխարհի: Վասն աստուածահրաշ
անճառ յարութեան և խրախութե
ընտրեալ քո հօտին, և աշակերտելոյ
կանանցն, և վասն համբարձմանն
յաննկատելի կեանս էական լուսոյն,
և զկայլակացեալ քրտունս արեան
աշխատութեանց, զոր առաջի ա-
ռաքչիդ քո աղերս մատուցեր սակս
մերոյ յանցանաց, և զդառնացեալ
կամս անեղիդ, և զդարձուցեալ ե-

ըեաս ահաւորիդ շրջեցեր 'ի քաղց-
րութիւն, և եւոր ակնարկել յա-
ղարաշծս լի քաղցրութեամբ. արդ
զայս ամենայն ունիմ առ քեզ բաղ-
մամեղս բարեխօս բանդ Աստուած,
մի թողուր զիս զուր և ունայն յան-
բաւ բարութեանցդ, զոր շնորհեցեր
աշխարհի: Եւ մի անմասն հաներ զիս
վասն բազում յանցանաց իմոց, քան-
զի քեզ կարելի է ամենայն: Հաշ-
տեա ընդ իս բարերար, և հաշտեցո
զՀայր քո օրհնեալ, քաղցրացո զա-
մենազօր սուրբ Հոգիդ, և ծածկեա
զնախատինս զազրալի առականաց
իմոց: Մի բարձրացուցաներ զչարիս
իմ քան զանչափ գթութիւն քո. մի
պահեր ոխս յաւիտեան, և մի տար
զգինս արեան քո 'ի ձեռս թշնամւոյն:
Վայ ինձ, քանզի մնացի պապքեալ 'ի
ջրոյդ կենաց ընդ զազրալի տեսու-
թեան լկատաց. յերկնաւոր հիահրա-
շութենէդ զրկեալ գտայ, և ընդ համ-
բուրիչ թոշակացեալ թշնամւոյն 'ի
վայր անկեալ եղէ 'ի գրկաց բարձ-
րելոյդ: Ընդ տղմաբնակ լինելոյս 'ի
յերկնային կամարացդ զերծայ, և

ընդ պաշտուշանաց սնոտեացս 'ի վե-
րինդ Երուսաղէմն գերեցայ. ընդ
շունս և ընդ պոռնիկս գնելով ըզ-
կեանս իմ, 'ի հայրական տանէդ լու-
սափայլ փափկութեան Ադին հեր-
քեցայ, և 'ի մեղկութենէ մտացս ըզ-
մուտ կենաց դրախտին փակեցի։
Յակնարկութենէ մահաբեր աչացս
իմ 'ի չար, 'ի յաւիտենից յուսոյ
խոստմանց քոց տարագրեցայ, և
յընթանալ մտքս իմ յանցանս՝ զեր-
խորանացդ երկնից քակտեցի։ Վայ-
ելուչ և ցանկալի եղև ինձ զան-
կուած կերպացեալ հողոյս քան զան-
շառ պսակն զոր հիւսեցին մատունք
հզօրիդ։ Եւ սիրելի համարեցայ զու-
նայնութիւն ունայն մեղսասէր աշ-
խարհիս քան զհրեղինացն պարակ-
ցութիւն, և հրաշուեալի հրաշուումն
առժամանակեայ կենացս քան ըզ-
մշտնջենաւոր հարսնարան երկնից
արքայիդ։ Գեղեցիկ երևեցաւ գեղ
կորատեան եղկելոյս քան զկերպա-
րանս այնոցիկ, որոց նշոյն կիզու
զարարածս։ Եւ վայելուչ 'ի միտս
իմ նկարեցաւ առժամանակեայ ան-

ցու�՝ քան զաստուածային փա-
ռացդ պայծառութիւն։ Ոչ յագե-
ցայ իմով կորստեամբս, և ոչ եւս
հանգիստ ամենեցուն արարչիդ։

Եւ արդ ո՞րպէս համարձակեցայց
հառաչել գոչել և պաղատել առ
քեզ անՀառելի բնութիւն և բան
հօր. զի թէ զամենայն ժամանակս
կենաց իմոց յերկիր անկեալ կայ-
ցեմ, ոչ ունիմ համարձակութիւն
համբառնալ զաչս իմ 'ի բարձունս,
ոչ շարժել զշրթունս, և ոչ կարկա-
ռել առ քեզ զձեռս, զի մրրիկ հնո-
ցի յաւիտենից խաւարին ծառացեալ
'ի սոցանէ ծովածաւալ մեծութիւ-
տարածեցաւ առաջի բարձրելոյդ, և
շոեմարան ամենայն անօրէնութեան
գտայ։ Քանիցս անգամ բարձրացու-
ցի զեղջիւր իմ 'ի բարձունս, և բանս
ահագնալուրս առ բարձրեալդ խօ-
սեցայ։ Քանիցս անգամ խռովեցու-
ցի զարարիչդ իմ, և 'ի դառնութիւն
ինձ զերկնային զօրսդ դարձուցի։
Քանիցս անգամ յանդգնեցայ մնա-
նել 'ի յարկս քո անարժան անձամբ,
և կամ քանիցս անգամ անվեհեր կա-

ցի 'ի սրբութեանց քոց անմաքուր
մտօք • քանիցս անգամ զողորմու-
թեամբ քո զանց արարի, և ոչ եմտու
փառս անուանդ քում սրբոյ • քա-
նիցս անգամ նորօրէն յանցանաց
միաք իմ եղեն գտիչ։ Քանիցս ան-
գամ մտաբերիկ եղէ յայն իրն որ ընդ
բնութեամբ մարդոյ ոչ բերի, և կամ
քանիցս անգամ յեռս կացի յԱստու-
ծոյ փրկչէդ իմմէ։ Ոչ ձանձրացայ
'ի չարեաց, և ոչ արարի լրումն ի-
մոյ անօրէնութես • յամենայն ժամ
չարահնար պոռնիկ, յանցաւոր, ամ-
բարիշտ, անողորմ, անզեղջ, դառ-
նախորհուրդ, բարիատեաց, հեղգ,
ծոյլ, և ամենայն պատրանաց ցան-
կացող և թշուառութեանց նեղքոյ
անկեալ։ Եւ արդ զիարդ լինիցի ինձ
փրկութիւն գտանել, որ այսչափ
դառնացուցի զքեզ, և եղէ կործա-
նիչ և սատակիչ անձին իմոյ, և յայդ-
քան մարդասիրութենէդ և յանձառ
փառացդ զրկեալ գտայ։ Բայց յոյս
անյուսալի անձին իմոյ լինի անսահ-
մանն քո ողորմութիւնդ, որ զայդ-
քան ահեղ աստուածութիւնդ ինչու-

ցեր յայնքան ահեղ խոնարհութիւն
վասն մեղաւորաց, որ և թուք և ապ-
տակ ընկալար. և զոր երկինք երկ-
նից և տիեզերք ամենայն տանել ոչ
կարեն, և բնութիւնք հրեղինացն
ճառել ոչ կարեն, 'ի գերեզման ի-
ջեր:

Արդ վասն զի անբաւ է յիշատակ
իմոյ յանցանացս և սարսափելի,
վասն այսորիկ զահաւոր և զսոսկալի
անօրէնութիւն քո ունիմ բազմամե-
ղիս բարեխօս, և զկիրս չարչարանաց
քոց ունիմ աղերս առ երկնաւոր և
երկրաւոր բնութիւնս. զի հանդի-
սակից լիցին և ճար անճարակիս: Եւ
զպաղատանս իւրեանց սակս իմ արկ-
ցեն առաջի ահաւոր տէրութեանդ,
և օժանդակ լիցի բարեխօս Հոգւոյդ
սուրբ, և խնամակալ հայրական
տեսչութիւնդ, զի անբարկանալի
բնութիւն բարձրելոյդ 'ի վերայ իմ
'ի քաղցրութիւն փոխարկեսցի, և
հառաչումն հասցէ 'ի սիրտս քաղցր
և բարի անյիշաչար տէրութեանդ,
որ օրհնեալ ես յաւիտենից յաւի-
տեանս. ամէն:

ԺԲ

Եւ արդ, տէր իմ Յիսուս, զայդ-
քան զօրութիւնդ և զողորմութիւնդ
մի՛ ակարացուցաներ վասն իմոյ անօ-
րէնութեանս, և մի՛ 'ի խոյզ և 'ի խըն-
դիր իմ զաղբալի և խաւարային մը-
տածութեանս անկանիր. այլ ըստ
զամենայն կապանս կնքեալս պար-
տեաց իմոց, և պատառեա զձեռա-
գիր իմոյ յանցանացս. թող զյան-
ցանս, քաւեա զանօրէնութիւնս իմ,
և ողորմեա մինչդեռ եմ 'ի մարմնի.
սրբեա զմիտս և զհոգիս յամենայն
աղտէ չարեաց. Ճարդ անՃարաց և
հնարդ ամենայն անհնարութեանց,
լեր բժիշկ վերաւորեալ ոգւոյս, և
արկ զողորմութեան քո սպեղանիս՝
մահահարուած գանելոյս, և արժա-
նաւորեա զշնչմամբ, արտասուօք և
հառաչմամբ սրտիւ, արժանաւոր
ապաշխարութեամբ և արեամբ ա-
ւազանաւ հասանել թողութեան,
և աչալրջութեամբ կալ առաջի սոս-

կալն ահաւոր բեմիդ 'ի մեծի և յան-
երեկ աւուրն համառօտի, յորժամ
հրեշտակապետացն հնչին փողքն, և
շարժին ամենայն տարրք և անտարրք
յերկրպագութիւն ամենասուրբ Եր-
րորդութեանդ, և դղրդեալ սասա-
նին հիմունք անդնդային հաստա-
տութեանն 'ի յահէ արփիատարրք բո-
ցոյ փայլատականցն թորմանէ երկ-
նատարափ հրեղինացն, և 'ի կայ-
ծակնառաք ցոլմանէ շանթից լա-
ւեալ աղեղանցն. յորմէ հրդեհեալ
հալին բնութիւնք եղեալոցս. յորժամ
դալարին երկինք և հրայրեաց լու-
ծանին պարուսակք վերին հաստա-
տութեանն: Յորժամ բորբոքեալ
ծխին լերինքն յաւիտենից և ամե-
նայն զգալեացս էութիւնք ըմբռնեալ
'ի տագնապէ աւուրն ահագին՝ սոս-
կալի սարսափմամբ յահէ ահաւո-
րիդ տագնապեալ տատանին: Յոր-
ժամ հուրն յաւիտենից ընդ զոլորտս
արարածոց, և արտաքին խաւարին
բացակայեալ երևին Ճանապարհքն:
Յորժամ բանին անեզրական բերանք
գբոյն անդնդոց, և լայնեն դժոխք

զորովայնս իւրեանց, և առասանքն հրամանուածք և տէգք սայրասուրք խաղան 'ի նոսա։ Յորժամ դահիճքն դաժան մի զմիով կուտակին և մրրկեալ սրտմտութեամբ ցանկան ծըծել զարիւնս ամբարշտացն։ Յորժամ բանան դրունք երկնից և երևին բանակք անմահիցն խումբս առեալ զարմանազան զինուք՝ ակն ունելով երևման անմահ արքայիդ։ Յորժամ գաբրիէլեանն ահագին հնչէ փողն առ յաւիտենից ննջեցեալսն՝ եթէ ահա փեսայ գայ արիք ընդ առաջ նորա, և դղրդեալ զարհուրմամբ համահաւաքին մարմնեղինացս տեսակք ըստ իւրաքանչիւր կերպի զիւրն առեալ տեսակ։ Յորժամ ամենայն ծնունդք Ադամայ յարդանդէ երկրէ վերաբերեալք ըստ իւրաքանչիւր մասին երևակեալ յայտնին գործք ամենեցուն և նշանակեալ գրին 'ի մարմնս իւրեանց չարիքն և բարիքն։ Յորժամ քակին անանջրպետք խորանաց վերին առագաստաց, և բանին անբաւ դրունքն և վերանան յոգնազան քօղք երեսաց ահաւորիդ, և

յանմատոյց լուսոյդ հատանին Ճա-
ռագայթքն, և ցուցանիս անցուցա-
կանդ հրեղինացն. յորմէ այլայլեալ
բնութիւնք վերին զօրութեանցն հա-
չին, և զարհուրեալ երկիւղալի սար-
սափմամբ տագնապին յանեղահրաշ
փառաց քոց, Տէր։ Յորժամ լուծա-
նին համօրէն բնութիւնք եղելոցս
յիսկապէս ակնարկութենէ երրազ-
գեայ միութեանցդ, և դնի աթոռ
դատաստանի, և պատրաստի դա-
տողական իշխանութիւն բանիդ Աս-
տուծոյ, և ամենայն արարածք պը-
շուցեալ ընդդէմ դրանց երկնից ակն
ունելով երևման յամեցելոյ փեսայ-
ին 'ի վերջնում դիշերին։ Յորժամ
երևիս ընդ ամպս երկնից՝ ամպախա-
ղաց գալստեամբ, և դասք սրբոցն
ընթանան ընդ առաջ երկնից ար-
քայիդ, և մեղաւորքն հալին որպէս
մոմ 'ի հուր յերեսաց քոց։ Յոր-
ժամ հատանիս առ հինաւուրցն յա-
տեանն ահագին, և բաժանին օդինքն
և այծինքն, և բանին դպրութիւնքն
հրեղինացն, և երևիս իւրաքանչիւր
ումեք, և դաղտնիք և յայտնիք հրա-

պարակին ամենեցուն առաջի սոս-
կալի բեմիդ, և դումարեալ պակու-
ցեալ հիացեալ երկնային և երկրային
բնութիւնքս կան առաջի։ Յորժամ
Ճառագայթք սուրբ խաչին ցոլա-
ցեալ զցանկ խորոց խաւարին լու-
սաւորէ, և 'ի բաց բառնան ամենայն
լուսաւորացն Ճառագայթք։ Յոր-
ժամ քննին փորձին իբրև 'ի բովս
երամք մեղաւորացն, և յառաջ բե-
րեալ երևակին գործք իւրաքանչիւ-
րոցն, և պապանձեալ արձանացեալ
կարկին բերանք բնաւիցն 'ի պատաս-
խանատուութենէ ամենատեսիդ, և
շարաւ հոսող դառնութեամբ չարեացն
նշաւակի առաջի ահաւոր տէրու-
թեանդ, և ամօթն այն յաւիտենից
և գեհենն անտանելի կորստակա-
նացն լինի։ Յորժամ անաչառ և սար-
սափելի հատանի 'ի վերայ նոցա վը-
ճիռ անմահ մահուն, և դղրդեալ ա-
մենայն հրեղինացն հանդէսքն շար-
ժին վերացուցեալ զհրանիւթ դա-
ւազանս բարկութեան 'ի վերայ նո-
ցա և ոչ տան թոյլ կրկնել բանից.
զի հատանի Ճար փրկութեան ամ-

պարշտացն. տիրէ խաւարն, և յոր-
ձանքն հրեղէն գետոցն պատեալ պա-
շարէ զնոսա։ Յորժամ հառաչումն
գոչման ահեկացն 'ի տագնապի ա-
ղետիցն հասանէ մերձ յերկինս 'ի
պաղատանս ողորմագինս առաջի քո,
և ամենալուր ունկն քո ոչ լսէ զհրն-
չումն աղաղակին, զի ակն քո ոչ տե-
սանէ, և երեսք քո ոչ դառնայ 'ի
նոսա, այլ միշտ բարի բնութիւնդ 'ի
բարկութիւն փոխարկի 'ի վերայ որ-
դւոցն բարկութեան, և ողորմու-
թիւնդ անբաւ արբուցանէ նոցա ըզ-
բաժակ դառնութեան յայնմ դառ-
նութեանն ժամուն, և փոխանակ ակն-
կալութեան յուսոյ զանիծիցն ա-
ռեալ զձիրս՝ բարկութիւն 'ի վերայ
բարկութեան արծարծի, և անհրա-
ժեշտ մատնումն յաւիտենից հրոյն
'ի վերայ նոցա տարածի։ Յորժամ
կապին ոտք և ձեռք անգին գերելոցն
անմբեռելի կայծակնաւաք արտա-
քինկացեալ շանթիւքն, և անկանին 'ի
վիհն յաւիտենից, այն որ արտաքոյ
այցելութեան քո խմանին սահմանք։
Ուստի յարաշարժ բմբիւն թնդիւն

և Հայթմունք որոտմանցն հանդերձ նեմատարաւի հրեղէն անձրևօք տեղան 'ի վերայ և սահեալ յայլ ևս անդունդս անդնդոց ծածկին յորձանաշաւիժ որդնալի կոհակօքն հրատարած իբր զձկունս կարթեայս յոլովայն անբաւութեանց ջուրց։ Յորժամ արտաքսին աղխին փակին 'ի կիզոզական հուր տապակաց հանդէսք անօրինացն, կնքեալ դրամբք մատանեաւ անեղիդ և անդր ևս ի ջեալ իրաւամբքն յանզրաւ յանսպառն կապարանս դժոխոցն, այնոքիկ ոչ առաւել դառնացուցին ըզքեզ 'ի բերան անդնդակուլ վիշապացն՝ կարթեալ և եռացեալ զգայութեան իւրաքանչիւրոցն որով մեղան քեզ հրաթոյն որդունքն չեղջակուտեալ զետեղն անձամբքն։ Յորժամ ընու կատարն սահման կիտի կենաց աշխարհիս, և դադարեն արարածք յաշխատութենէ, և ախրէ արդարութիւն և խաղաղութիւն, և հանգչի ամենապօր ասատուածութիւդ 'ի դժնէվարուց չարասէր կենցաղոյս, և ջնջին յիշատակք մեղաւորաց յե-

ութաց քոց, և հայրախնամ գթութեամբ 'ի գիրկս քո գրաւեա զայնոսիկ որք տաճարացուցին զանձինս իւրեանց օթևան աստուածութեդ քո լինել և ըմպել զբաժակ չարչարանաց քոց, զնի հարանարան ահեղ, հասանէ ժամանակն որում պասքեալ ցանկային երամք արդարոցն. զի ըմբռնեալ եղեւ արքայութիւն սրբոցն, և ժամանեաց օրն այն օրհնեալ օրհնելոյդ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 Ա.ՅԼ օրինակ հրանիւռ։
2 Ա.ՅԼ օր. անդնդային։
3 Ա.ՅԼ օր. մեծ է։
4 Օրինակմի անկրակարան։
5 Ա.ՅԼ օր. պաշխարհամանէր։
6 Թուղթ անկեալ է յօրինակէն։

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144